

ԿՈՆՎԵՆՑԻԱ

Ժամանակավոր ներմուծման մասին

(Ստամբուլ, 26-ը հունիսի 1990 թ.)

Կոնվենցիայի հիմնական տեքստ

Հավելվածներ Ա, Բ.1-ից Բ.9, Գ, Դ եւ Ե

ԿՈՆՎԵՆՑԻԱ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն Կոնվենցիայի ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԸ՝ հաստատված Մաքսային համագործակցության խորհրդի հովանու ներքո,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ ժամանակավոր ներմուծման մասին միջազգային մաքսային կոնվենցիաների տարածմանն ու տարակենտրոնացված բնույթին առնչվող ներկա վիճակն անբավարար է,

ՀԱՄԱՐԵԼՈՎ, որ դրությունը կարող է վատթարանալ ապագայում, երբ անհրաժեշտ լինի միջազգայնորեն կարգավորել ժամանակավոր ներմուծման նոր կատեգորիաները,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ առևտրի ոլորտի ներկայացուցիչների եւ շահագրգիռ այլ կողմերի ցանկություններն առ այն, որպեսզի ժամանակավոր ներմուծման ձեւակերպումներ կատարելը դյուրացվի,

ՀԱՄԱՐԵԼՈՎ, որ մաքսային ընթացակարգերի պարզեցումն ու ներդաշնակեցումը եւ, մասնավորապես, ժամանակավոր ներմուծման մասին առկա կոնվենցիաները միավորող մեկ միջազգային փաստաթղթի ընդունումը կարող է դյուրացնել ժամանակավոր ներմուծումը կարգավորող միջազգային դրույթների հասանելիությունը եւ արդյունավետ կերպով նպաստել միջազգային առևտրի եւ միջազգային այլ փոխանակումների զարգացմանը,

ՀԱՄՈՉՎԱԾ ԼԻՆԵԼՈՎ, որ ժամանակավոր ներմուծման վերաբերյալ միասնական դրույթներ առաջարկող միջազգային փաստաթուղթը կարող է զգալի օգուտ բերել միջազգային փոխանակումներին եւ ապահովել մաքսային ընթացակարգերի պարզեցման ու ներդաշնակեցման բարձր աստիճան, ինչը Մաքսային համագործակցության խորհրդի կարելուր նպատակներից է,

ՎՃՌԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՎ դյուրացնել ժամանակավոր ներմուծումը՝ պարզեցնելով եւ ներդաշնակեցնելով ընթացակարգերը, հետամուտ լինելով տնտեսական, մարդասիրական, մշակութային, սոցիալական կամ զբոսաշրջային նպատակներին,

ՀԱՄԱՐԵԼՈՎ, որ ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի տիպային մոդելի ընդունումը, որպես միջազգային երաշխիքով ապահովված միջազգային մաքսային փաստաթղթեր, նպաստում է ժամանակավոր ներմուծման ընթացակարգի դյուրացմանն այն դեպքերում, երբ մաքսային փաստաթուղթ եւ երաշխիք է պահանջվում,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ներքոնշյալի մասին:

ԳԼՈՒԽ I

Ընդհանուր դրույթներ

Սահմանումներ

Հոդված 1

Սույն Կոնվենցիայի նպատակներով՝

ա) «Ժամանակավոր ներմուծում» եզրույթը նշանակում է՝

մաքսային ընթացակարգ, որով որոշակի ապրանքներ (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) կարող են բերվել մաքսային տարածք՝ պայմանականորեն ազատվելով ներմուծման տուրքեր ու հարկեր վճարելուց՝ եւ առանց տնտեսական բնույթի ներմուծման արգելքների կամ սահմանափակումների կիրառման: Այդ ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) պետք է ներմուծվեն հատուկ նպատակով եւ նախատեսված լինեն սահմանված ժամկետում վերաարտահանման համար՝ առանց որեւէ փոփոխության ենթարկվելու՝ բացառությամբ դրանց օգտագործման հետեւանքով առաջացած բնական մաշվածության:

բ) «ներմուծման տուրքեր եւ հարկեր» եզրույթը նշանակում է՝

մաքսային տուրքերը եւ բոլոր այլ տուրքերը, հարկերը, վճարները կամ այլ գանձումները, որոնք գանձվում են ապրանքների (ներառյալ տրանսպորտային միջոցների) ներմուծման ժամանակ կամ դրա առնչությամբ, սակայն չեն ներառում այն վճարներն ու գանձումները, որոնց գումարը սահմանափակվում է մատուցված ծառայությունների մոտավոր արժեքով:

գ) «երաշխիք» եզրույթը նշանակում է՝

մաքսային մարմինների կողմից ընդունվող, մաքսային մարմնի նկատմամբ պարտավորությունների կատարման ապահովում: Երաշխիքը բնութագրվում է որպես «ընդհանուր երաշխիք», եթե դրանով ապահովվում է մի քանի գործողություններից բխող պարտավորությունների կատարումը:

դ) «Ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր» եզրույթը նշանակում է՝

միջազգային մաքսային փաստաթուղթ, որն ընդունվում է որպես մաքսային հայտարարագիր եւ հնարավոր է դարձնում ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) նույնականացումը, եւ որը ներառում է ներմուծման տուրքերն ու հարկերը ծածկող՝ միջազգայնորեն վավեր երաշխիք:

ե) «Մաքսային կամ Տնտեսական միություն» եզրույթը նշանակում է՝

միություն, որը հիմնադրվել է սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին կետում նշված անդամների կողմից եւ կազմված է նրանցից, եւ որն իրավասու է սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի առնչությամբ ընդունել իր օրենսդրությունը, որը պարտադիր է իր անդամների համար, ինչպես նաեւ իր ներքին ընթացակարգերին համապատասխան՝

իրավասու է որոշում կայացնել սույն Կոնվենցիայի ստորագրման, վավերացման կամ դրան միանալու վերաբերյալ.

զ) «անձ» եզրույթը նշանակում է՝

ֆիզիկական եւ իրավաբանական անձ, եթե համատեքստով այլ բան չի ենթադրվում.

է) «խորհուրդ» եզրույթը նշանակում է՝

կազմակերպություն՝ ստեղծված Մաքսային համագործակցության խորհուրդը հիմնադրող կոնվենցիայով, որը ստորագրվել է Բրյուսելում՝ 1950 թ. դեկտեմբերի 15-ին.

ը) «վավերացում» եզրույթը նշանակում է՝

վավերացում, ընդունում կամ հաստատում:

ԳԼՈՒԽ II

Կոնվենցիայի կիրառման ոլորտը

Հոդված 2

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, պարտավորվում է ժամանակավոր ներմուծման ռեժիմ տրամադրել սույն Կոնվենցիայի հավելվածներում նշված ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) համար:
2. Չխախտելով Ե հավելվածի դրույթները՝ ժամանակավոր ներմուծման ռեժիմ է տրամադրվում ներմուծման տուրքերի եւ հարկերի վճարումից ամբողջական պայմանական ազատումով եւ առանց տնտեսական բնույթի ներմուծման արգելքների կամ սահմանափակումների կիրառման:

Հավելվածների կառուցվածքը

Հոդված 3

Սույն Կոնվենցիայի յուրաքանչյուր հավելված հիմնականում բաղկացած է.

ա) հավելվածում օգտագործվող հիմնական մաքսային եզրույթների սահմանումներից.

բ) հավելվածի առարկա հանդիսացող ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) նկատմամբ կիրառելի հատուկ դրույթներից:

ԳԼՈՒԽ III

Հատուկ դրույթներ

Փաստաթուղթ եւ երաշխիք

Հոդված 4

1. Եթե հավելվածում այլ բան նախատեսված չէ, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի թույլ տալ ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) ժամանակավոր ներմուծում՝ մաքսային փաստաթուղթ եւ երաշխիք ներկայացնելու դեպքում:
2. Եթե (վերոնշյալ 1-ին կետի համաձայն) պահանջվում է երաշխիք, ապա ժամանակավոր ներմուծման ընթացակարգից կանոնավոր կերպով օգտվող անձանց կարող է թույլատրվել ներկայացնել ընդհանուր երաշխիք:
3. Եթե հավելվածում այլ բան նախատեսված չէ, երաշխիքի գումարը չպետք է գերազանցի ներմուծման տուրքերի եւ հարկերի այն գումարը, որից ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) պայմանականորեն ազատվել են:
4. Ազգային օրենսդրությամբ ներմուծման արգելքների կամ սահմանափակումների ենթակա ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) համար կարող է պահանջվել լրացուցիչ երաշխիք՝ ազգային օրենսդրության դրույթներին համապատասխան:

Ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր

Հոդված 5

Չխախտելով ժամանակավոր ներմուծման գործողությունների վերաբերյալ Ե հավելվածով սահմանված դրույթները՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, իր ազգային մաքսային փաստաթղթերի փոխարեն եւ որպես Ա հավելվածի 8-րդ հոդվածում նշված գումարների մասով սահմանված երաշխիք, ընդունում է իր տարածքում վավեր համարվող ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը, որոնք սույն հավելվածում սահմանված պայմանների համաձայն՝ տրվում եւ օգտագործվում են այն ապրանքների համար (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները), որոնք ժամանակավոր ներմուծվել են Պայմանավորվող կողմի ընդունած՝ սույն Կոնվենցիայի մյուս հավելվածների համաձայն:

Նույնականացումը

Հոդված 6

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է իրականացնել ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) ժամանակավոր ներմուծում՝ պայմանով, որ դրանք հնարավոր լինի նույնականացնել, երբ ժամանակավոր ներմուծումն ավարտվի:

Վերաարտահանման ժամանակահատվածը

Հոդված 7

1. Ժամանակավոր ներմուծման իրավունք ստացած ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) պետք է վերաարտահանվեն որոշակի ժամանակահատվածում, որը բավարար է համարվում ժամանակավոր ներմուծման նպատակին հասնելու համար: Այդ ժամանակահատվածը առանձին սահմանված է յուրաքանչյուր հավելվածում:
2. Մաքսային մարմինները կարող են տրամադրել յուրաքանչյուր հավելվածում սահմանված ժամանակահատվածից ավելի երկար ժամանակահատված կամ երկարացնել սկզբնական ժամանակահատվածը:
3. Եթե ժամանակավոր ներմուծման իրավունք ստացած ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) չեն կարող վերաարտահանվել առգրավման հետեւանքով, բացառությամբ մասնավոր անձանց հայցի հիման վրա կատարված առգրավման, ապա վերաարտահանումը կասեցվում է առգրավման ժամանակահատվածով:

Ժամանակավոր ներմուծման փոխանցումը

Հոդված 8

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է, այդպիսի պահանջի առկայության դեպքում, թույլատրել ժամանակավոր ներմուծման ընթացակարգի արտոնության փոխանցումը որեւէ այլ անձի՝ պայմանով, որ այդ անձը.

- ա) բավարարում է սույն Կոնվենցիայում սահմանված պահանջները եւ
- բ) ստանձնում է ժամանակավոր ներմուծման ընթացակարգի առաջին շահառուի պարտավորությունները:

Ժամանակավոր ներմուծման դադարեցումը

Հոդված 9

Ժամանակավոր ներմուծումը սովորաբար դադարեցվում է այն ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) վերաարտահանմամբ, որոնց համար ժամանակավոր ներմուծման թույլտվություն է տրվել:

Հոդված 10

Ժամանակավոր ներմուծված ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) կարող են վերաարտահանվել մեկ կամ մեկից ավելի խմբաքանակներով:

Հոդված 11

Ժամանակավոր ներմուծված ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) կարող են վերաարտահանվել դրանց ներմուծման մաքսատնից բացի այլ մաքսատնից:

Դադարեցման հնարավոր այլ դեպքեր

Հոդված 12

Ժամանակավոր ներմուծումը կարող է դադարեցվել իրավասու մարմինների համաձայնությամբ՝ ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) ազատ նավահանգստում կամ ազատ գոտում, մաքսային պահեստում տեղավորելու կամ տարանցիկ փոխադրում մաքսային ընթացակարգով ձեւակերպելու միջոցով՝ դրանք հետագայում արտահանելու կամ այլ կերպ տնօրինելու նպատակով:

Հոդված 13

Ժամանակավոր ներմուծումը կարող է դադարեցվել բացթողում՝ ներքին սպառման համար ընթացակարգով ձեւակերպմամբ, եթե դա արդարացված է՝ հանգամանքներով պայմանավորված եւ թույլատրվում է ազգային օրենսդրությամբ՝ այդպիսի դեպքերում կիրառելի պայմանների եւ ձեւակերպումների կատարման պայմանով:

Հոդված 14

1. Ժամանակավոր ներմուծումը կարող է դադարեցվել, եթե ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) լուրջ վնաս են կրել վթարի կամ անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր) հետեւանքով եւ, մաքսային մարմինների որոշմամբ՝
 - ա) ենթարկվում են ներմուծման այն տուրքերին եւ հարկերին, որոնց վճարմանը դրանք ենթակա են վնասված վիճակում մաքսակետ ներկայացվելիս՝ ժամանակավոր ներմուծումը դադարեցնելու նպատակով.
 - բ) բոլոր ծախսերից ազատված՝ թողնվում են ժամանակավոր ներմուծման տարածքի իրավասու մարմիններին, ինչի դեպքում ժամանակավոր ներմուծումից օգտվող անձը չի վճարում ներմուծման տուրքեր եւ հարկեր. կամ
 - գ) ոչնչացվում են պաշտոնական հսկողության ներքո՝ շահագրգիռ կողմերի հաշվին, իսկ փրկված մասերը կամ նյութերը, ներքին սպառման համար բաց թողնելու դեպքում, ենթարկվում են ներմուծման այն տուրքերին եւ հարկերին, որոնց վճարմանը դրանք ենթակա են այն ժամանակ եւ այն վիճակում, երբ ներկայացվում են մաքսային մարմին վթարից կամ անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժորի) գործելուց հետո:
2. Ժամանակավոր ներմուծումը կարող է նաեւ դադարեցվել, եթե, շահագրգիռ անձի խնդրանքով, ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) տնօրինվում են վերոնշյալ 1-ին կետի «բ» կամ «գ» ենթակետերով նախատեսված եղանակներից մեկով, ինչպես կարող է որոշվել մաքսային մարմինների կողմից:
3. Ժամանակավոր ներմուծումը կարող է նաեւ դադարեցվել շահագրգիռ անձի խնդրանքով, եթե այդ անձը մաքսային մարմիններին ապացուցում է, որ ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) ոչնչացվել կամ ամբողջովին կորսվել են վթարի կամ անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժորի) հետեւանքով: Նման դեպքում ժամանակավոր ներմուծումից օգտվող անձն ազատվում է ներմուծման տուրքեր եւ հարկեր վճարելու պարտականությունից:

Այլ դրույթներ

Ճեականությունների կրճատում

Հոդված 15

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նվազագույնին հասցնի սույն Կոնվենցիայով նախատեսված պայմանների առնչությամբ պահանջվող մաքսային ձեականությունները: Այդ ձեականություններին առնչվող բոլոր կանոնակարգերը պետք է անհապաղ հրապարակվեն:

Նախնական թույլտվություն

Հոդված 16

1. Եթե ժամանակավոր ներմուծումը ենթակա է նախնական թույլտվության, ապա այն պետք է հնարավորինս շուտ տրվի իրավասու մաքսային մարմնի կողմից:
2. Բացառիկ դեպքերում, երբ պահանջվում է թույլտվություն, որը տրվում է ոչ մաքսային մարմնի կողմից, ապա այն պետք է տրվի հնարավորինս շուտ:

Նվազագույն պայմաններ

Հոդված 17

Սույն Կոնվենցիայի դրույթները սահմանում են համաձայնեցման ենթակա նվազագույն պայմանները: Դրանք չեն արգելում ավելի լայն պայմանների կիրառումը, որոնք Պայմանավորվող կողմերը տրամադրում են կամ հետագայում կարող են տրամադրել միակողմանի դրույթների կամ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի հիման վրա:

Մաքսային կամ Տնտեսական միություններ

Հոդված 18

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար Մաքսային կամ Տնտեսական միություն կազմող Պայմանավորվող կողմերի տարածքները կարող են դիտվել որպես մեկ տարածք:
2. Սույն Կոնվենցիայում ոչինչ չի արգելում Մաքսային կամ Տնտեսական միություն կազմող Պայմանավորվող կողմերին ընդունել տվյալ Միության տարածքում ժամանակավոր ներմուծման գործողություններին վերաբերող հատուկ դրույթներ՝ պայմանով, որ այդ դրույթները չեն նվազեցնում սույն Կոնվենցիայով նախատեսված հնարավորությունները:

Արգելքներ եւ սահմանափակումներ

Հոդված 19

Սույն Կոնվենցիայի դրույթները չեն խոչընդոտում ազգային օրենքներով եւ կանոնակարգերով նախատեսված արգելքների կամ սահմանափակումների կիրառումը այնպիսի ոչ տնտեսական նկատառումների հիմքով, ինչպիսիք են հանրային բարքերը կամ հասարակական կարգը, հանրային անվտանգությունը, հիգիենան կամ առողջությունը, անասնաբուժական կամ ֆիտոսանիտարական նկատառումները, վայրի կենդանական ու բուսական աշխարհի վտանգված տեսակներին կամ հեղինակային իրավունքի եւ արդյունաբերական սեփականության օբյեկտների պաշտպանությանն առնչվող նկատառումները:

Խախտումներ

Հոդված 20

1. Սույն Կոնվենցիայի դրույթների ցանկացած խախտում կհանգեցնի այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցների կիրառմանը, որի տարածքում կատարվել է այդ օրինախախտումը:
2. Եթե հնարավոր չէ որոշել, թե որ տարածքում է տեղի ունեցել խախտումը, ապա համարվում է, որ այն կատարվել է այն Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ իրավախախտումը հայտնաբերվել է:

Տեղեկությունների փոխանակում

Հոդված 21

Պայմանավորվող կողմերը, համապատասխան պահանջի դեպքում եւ ազգային օրենսդրությամբ սահմանված շրջանակներում, սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման նպատակով միմյանց տրամադրում են անհրաժեշտ տեղեկություններ:

Տվյալների մշակման էլեկտրոնային համակարգեր

Հոդված 21

Սույն Կոնվենցիայի դրույթների կիրարկման համար անհրաժեշտ բոլոր ձեւակերպումները կարող են իրականացվել էլեկտրոնային եղանակով՝ Պայմանավորվող կողմի կողմից հաստատված տվյալների մշակման էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ:

ԳԼՈՒԽ V

Եզրափակիչ դրույթներ

Վարչական կոմիտե

Հոդված 22

1. Ստեղծվում է Վարչական կոմիտե՝ սույն Կոնվենցիայի կիրարկման հետ կապված հարցերը, դրա մեկնաբանման եւ կիրառման միասնականության ապահովմանն ուղղված ցանկացած միջոցառումները եւ Կոնվենցիայում առաջարկվող փոփոխությունները քննարկելու նպատակով: Վարչական կոմիտեն որոշում է կայացնում սույն Կոնվենցիայում նոր հավելվածներ ներառելու վերաբերյալ:
2. Վարչական կոմիտեի անդամները Պայմանավորվող կողմերն են: Կոմիտեն կարող է որոշում կայացնել, որ սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածում նշված Պայմանավորվող կողմ չհանդիսացող որեւէ անդամի, պետության կամ մաքսային տարածքի իրավասու վարչակազմերը կամ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել Կոմիտեի նիստերին որպես դիտորդներ, երբ քննարկվում են իրենց հետաքրքրող հարցեր:
3. Խորհուրդը Կոմիտեին տրամադրում է Քարտուղարության ծառայությունները:
4. Յուրաքանչյուր նիստի համար Կոմիտեն ընտրում է նախագահ եւ փոխնախագահ:
5. Պայմանավորվող կողմերի իրավասու վարչակազմերը Խորհրդին են ներկայացնում սույն Կոնվենցիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները եւ դրանց հիմնավորումները՝ Կոմիտեի նիստերի օրակարգում դրանք ներառելու խնդրանքի հետ միասին: Խորհուրդը դրանք ներկայացնում է Պայմանավորվող կողմերի եւ սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածում նշված՝ Պայմանավորվող կողմեր չհանդիսացող անդամների, պետությունների կամ մաքսային տարածքների իրավասու վարչակազմերի ուշադրությանը:
6. Խորհուրդը Կոմիտեի նիստ է գումարում Կոմիտեի կողմից որոշված օրը, ինչպես նաեւ առնվազն երկու Պայմանավորվող կողմերի իրավասու վարչակազմերի դիմումի հիման վրա: Խորհուրդը օրակարգի նախագիծը շրջանառության մեջ է դնում՝ այն ուղարկելով Պայմանավորվող կողմերին եւ սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածում նշված՝ Պայմանավորվող կողմեր չհանդիսացող անդամների, պետությունների կամ մաքսային տարածքների իրավասու վարչակազմերին՝ Կոմիտեի հանդիպումից առնվազն վեց շաբաթ առաջ:

7. Սույն հոդվածի 2-րդ կետի դրույթների ուժով Կոմիտեի ընդունած որոշման հիման վրա Խորհուրդը սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածում նշված՝ Պայմանավորվող կողմեր չհանդիսացող անդամների, պետությունների կամ մաքսային տարածքների իրավասու վարչակազմներին եւ շահագրգիռ միջազգային կազմակերպություններին հրավիրում է իրենց ներկայացուցիչների միջոցով որպես դիտորդ մասնակցելու Կոմիտեի նիստերին:
8. Առաջարկությունները դրվում են քվեարկության: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որը ներկայացված է հանդիպմանը, ունի մեկ քվե: Այն առաջարկությունները, որոնք չեն վերաբերում սույն Կոնվենցիայում փոփոխություններ անելուն, Կոմիտեի կողմից ընդունվում են ներկա գտնվող եւ քվեարկող անդամների ձայների մեծամասնությամբ: Սույն Կոնվենցիայում փոփոխություններ անելու վերաբերյալ առաջարկություններն ընդունվում են ներկա գտնվող եւ քվեարկող անդամների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:
9. Սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 7-րդ կետի կիրառման դեպքում, սույն Կոնվենցիայի կողմեր հանդիսացող Մաքսային կամ Տնտեսական միությունները քվեարկության դեպքում ունեն քվեների միայն այն քանակը, որը հավասար է սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմեր հանդիսացող իրենց անդամներին հատկացված քվեների ընդհանուր քանակին:
10. Նախքան նիստի ավարտը Կոմիտեն ընդունում է զեկույցը:
11. Սույն հոդվածում համապատասխան դրույթների բացակայության դեպքում կիրառվում են Խորհրդի ընթացակարգային կանոնները, եթե Կոմիտեն այլ որոշում չի կայացնում:

Վեճերի կարգավորումը

Հոդված 23

1. Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ երկու եւ ավելի Պայմանավորվող կողմերի միջեւ ծագած ցանկացած վեճ պետք է հնարավորինս կարգավորվի բանակցությունների միջոցով:
2. Յանկացած վեճ, որը չի լուծվել բանակցությունների միջոցով, վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող կողմերը ներկայացնում են Վարչական կոմիտե, որն այնուհետեւ քննարկում է վեճը եւ առաջարկություններ ներկայացնում դրա կարգավորման համար:
3. Վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող կողմերը կարող են նախապես համաձայնել, որ ընդունելու են Վարչական կոմիտեի առաջարկությունները որպես պարտադիր ուժ ունեցող:

Ստորագրում, վավերացում եւ միացում

Հոդված 24

1. Խորհրդի ցանկացած անդամ եւ Միավորված ազգերի կազմակերպության կամ նրա մասնագիտացված գործակալությունների ցանկացած անդամ կարող են դառնալ սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ՝

- ա) ստորագրելով Կոնվենցիան՝ առանց վավերացման վերաբերյալ վերապահման.
- բ) վավերացման պայմանով ստորագրելուց հետո՝ վավերագիրն ի պահ հանձնելով. կամ
- գ) միանալով Կոնվենցիային:
2. Սույն Կոնվենցիան բաց է սույն հոդվածի 1-ին կետում նշված անդամների ստորագրման համար կա՛մ Խորհրդի նիստերին, որոնց ընթացքում այն ընդունվել է, կա՛մ, այնուհետև, Խորհրդի՝ Բյուրոյում գտնվող գլխամասային գրասենյակում՝ մինչև 1991 թվականի հունիսի 30-ը: Այդ օրվանից հետո այն բաց է անդամների միանալու համար:
 3. Պայմանավորվող կողմի կողմից առաջադրված որեւէ առանձին մաքսային տարածք ներկայացնող ցանկացած պետություն կամ կառավարություն, որը պատասխանատու է իր դիվանագիտական հարաբերությունների պաշտոնական վարման համար, որը, սակայն, չլինելով սույն հոդվածի 1-ին կետում նշված կազմակերպությունների անդամ, անկախ է իր երկրի առևտրային հարաբերություններն իրականացնելիս եւ որին, Վարչական կոմիտեի խնդրանքով, ավանդապահն անդամակցության նպատակով հրավեր է ուղարկել, կարող է դառնալ սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ՝ միանալով Կոնվենցիային՝ ուժի մեջ մտնելուց հետո:
 4. Սույն հոդվածի 1-ին կամ 3-րդ կետերում նշված ցանկացած անդամ, պետություն կամ մաքսային տարածք սույն Կոնվենցիան առանց վավերացման վերաբերյալ վերապահման ստորագրելիս, վավերացնելիս կամ դրան միանալիս պետք է նշի այն հավելվածները, որոնք նա ընդունում է՝ պարտադիր ընդունելով Ա հավելվածը եւ առնվազն մեկ այլ հավելված: Նա կարող է հետագայում ավանդապահին ծանուցել մեկ կամ ավելի հավելվածներ ընդունելու մասին:
 5. Այն Պայմանավորվող կողմերը, որոնք ընդունում են Վարչական կոմիտեի որոշմամբ սույն Կոնվենցիայում ներառվող որեւէ նոր հավելված, այդ մասին պարտավոր են ծանուցել ավանդապահին՝ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան:
 6. Պայմանավորվող կողմերն ավանդապահին հաղորդում են սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի եւ 24-րդ հոդվածի 7-րդ կետի, Ա հավելվածի 2-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերի եւ Ե հավելվածի 4-րդ հոդվածի կիրառման պայմանները կամ դրանցով պահանջվող տեղեկությունները: Նրանք պետք է նաեւ տեղեկացնեն այդ դրույթների կիրառման ցանկացած փոփոխության մասին:
 7. Ցանկացած Մաքսային կամ Տնտեսական միություն կարող է դառնալ սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ՝ սույն հոդվածի 1-ին, 2-րդ եւ 4-րդ կետերին համապատասխան: Այդ Մաքսային կամ Տնտեսական միությունը տեղեկացնում է ավանդապահին սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ իր իրավասության մասին: Սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ հանդիսացող Մաքսային կամ Տնտեսական միությունն իր իրավասության շրջանակում գտնվող հարցերի առնչությամբ իր անունից իրականացնում է իրավունքներ եւ կատարում պարտավորություններ, որոնք սույն Կոնվենցիայով դրվում են այն անդամների վրա, որոնք սույն Կոնվենցիայի

Պայմանավորվող կողմեր են: Նման դեպքում այս անդամները իրավասու չեն առանձին իրականացնելու այդ իրավունքները՝ ներառյալ քվեարկության իրավունքը:

Ավանդապահը

Հոդված 25

1. Սույն Կոնվենցիան, դրա վավերացման վերաբերյալ վերապահմամբ կամ առանց այդ վերապահման բոլոր ստորագրությունները, ինչպես նաեւ վավերացման կամ միանալու վերաբերյալ բոլոր փաստաթղթերն ի պահ են հանձնվում Խորհրդի Գլխավոր քարտուղարին:
2. Ավանդապահը՝
 - ա) ստանում է սույն Կոնվենցիայի բնօրինակները եւ ապահովում է դրանց պահպանումը,
 - բ) պատրաստում է սույն Կոնվենցիայի բնօրինակների հաստատված պատճենները եւ դրանք փոխանցում է սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին եւ 7-րդ կետերում նշված անդամներին եւ Մաքսային կամ Տնտեսական միություններին,
 - գ) ստանում է վավերացման վերաբերյալ վերապահմամբ կամ առանց այդ վերապահման, սույն Կոնվենցիան վավերացնելու կամ դրան միանալու վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ, ինչպես նաեւ ստանում եւ ապահովում է սույն Կոնվենցիային վերաբերող ցանկացած փաստաթղթի, ծանուցման եւ հաղորդագրության պահպանումը,
 - դ) ստուգում է, ստորագրության կամ սույն Կոնվենցիային վերաբերող ցանկացած փաստաթղթի, ծանուցման կամ հաղորդագրության՝ սահմանված կարգով եւ պատշաճ ձեւով կատարված լինելը եւ անհրաժեշտության դեպքում այդ մասին տեղեկացնում է համապատասխան Պայմանավորվող կողմին,
 - ե) ծանուցում է սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմերին, այլ ստորագրող կողմերին, Խորհրդի այն անդամներին, որոնք սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմեր չեն, ինչպես նաեւ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին՝
 - սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածին համապատասխան՝ հավելվածների ընդունման, ստորագրման, վավերացման եւ դրանց միանալու մասին,
 - այն նոր հավելվածների մասին, որոնք Վարչական կոմիտեն որոշել է ներառել սույն Կոնվենցիայում,
 - սույն Կոնվենցիայի եւ յուրաքանչյուր հավելվածի ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին՝ սույն Կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն,
 - սույն Կոնվենցիայի 24-րդ, 29-րդ, 30-րդ եւ 32-րդ հոդվածների համաձայն ստացված ծանուցումների մասին,
 - սույն Կոնվենցիայի 31-րդ հոդվածով նախատեսված դադարեցման մասին,

- սույն Կոնվենցիայի 32-րդ հոդվածին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխության եւ դրա ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:
3. Պայմանավորվող կողմի եւ ավանդապահի միջեւ վերջինիս գործառույթների կատարման կապակցությամբ առաջացած տարաձայնությունների դեպքում ավանդապահը կամ այդ Պայմանավորվող կողմը հարցը ներկայացնում են մյուս Պայմանավորվող կողմերի եւ սույն Կոնվենցիան ստորագրած կողմերի կամ, համապատասխան դեպքերում, Խորհրդի ուշադրությանը:

Ուժի մեջ մտնելը

Հոդված 26

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին եւ 7-րդ կետերում նշված հինգ Անդամների կամ Մաքսային կամ Տնտեսական միությունների կողմից սույն Կոնվենցիան առանց վավերացման մասին վերապահումով ստորագրելուց կամ վավերացման կամ միանալու մասին իրենց փաստաթղթերն ի պահ հանձնելուց երեք ամիս հետո:
2. Ցանկացած Պայմանավորվող կողմի համար, որն ստորագրում է սույն Կոնվենցիան՝ առանց վավերացման մասին վերապահումով, վավերացնում է սույն Կոնվենցիան կամ միանում է դրան հինգ Անդամների կամ Մաքսային կամ Տնտեսական միությունների կողմից սույն Կոնվենցիան առանց վավերացման մասին վերապահմամբ ստորագրելուց կամ վավերացնելուց կամ միանալու մասին իրենց վավերագրերն ի պահ հանձնելուց հետո, սույն Կոնվենցիան տվյալ Պայմանավորվող կողմի համար ուժի մեջ է մտնում՝ սույն Կոնվենցիան առանց վավերացման մասին վերապահման ստորագրելուց կամ վավերացման կամ միանալու մասին իր փաստաթղթերն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:
3. Սույն Կոնվենցիայի ցանկացած հավելված ուժի մեջ է մտնում երեք ամիս հետո՝ սկսած այն պահից, երբ հինգ Անդամներ կամ Մաքսային կամ Տնտեսական միություններ ընդունեն տվյալ հավելվածը:
4. Ցանկացած Պայմանավորվող կողմի համար, որն ընդունում է հավելվածը հինգ Անդամների կամ Մաքսային կամ Տնտեսական միությունների կողմից այն ընդունելուց հետո, տվյալ Պայմանավորվող կողմի համար այդ հավելվածն ուժի մեջ է մտնում դրա ընդունման մասին ծանուցելուց հետո երեք ամիս անց: Այնուամենայնիվ, որեւէ հավելված Պայմանավորվող կողմի համար ուժի մեջ չի մտնում նախքան այդ Պայմանավորվող կողմի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելը:

Չեղյալ հայտարարելու վերաբերյալ դրույթ

Հոդված 27

Սույն Կոնվենցիայի՝ չեղյալ հայտարարելու վերաբերյալ դրույթ պարունակող հավելվածն ուժի մեջ մտնելուց հետո այդ հավելվածով ուժը կորցրած են ճանաչվում կամ փոխարինվում են այն Կոնվենցիաները կամ Կոնվենցիաների այն դրույթները, որոնք չեղյալ հայտարարելու վերաբերյալ դրույթի առարկան են եւ վերաբերում են այն Պայմանավորվող կողմերին, որոնք ընդունել են տվյալ հավելվածը եւ այդ Կոնվենցիաների Պայմանավորվող կողմեր են:

Կոնվենցիան եւ հավելվածները

Հոդված 28

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, Պայմանավորվող կողմի համար պարտադիր ուժ ունեցող բոլոր հավելվածները կազմում են սույն Կոնվենցիայի անբաժանելի մասը եւ այդ Պայմանավորվող կողմի առնչությամբ՝ ցանկացած հղում Կոնվենցիային համարվում է հղում այդ հավելվածներին:
2. Վարչական կոմիտեում քվեարկության նպատակների համար յուրաքանչյուր հավելված դիտարկվում է որպես առանձին Կոնվենցիա:

Վերապահումներ

Հոդված 29

1. Ցանկացած Պայմանավորվող կողմ, որն ընդունում է որեւէ հավելված, համարվում է, որ ընդունում է դրանում ներառված բոլոր դրույթները, եթե հավելվածն ընդունելու պահին կամ դրանից հետո՝ ցանկացած ժամանակ, Պայմանավորվող կողմը ավանդապահին չի ծանուցում այն դրույթների մասին, որոնց վերաբերյալ վերապահումներ է անում, եթե այդպիսի հնարավորությունը նախատեսված է տվյալ հավելվածում՝ նշելով իր ազգային օրենսդրության դրույթների եւ տվյալ դրույթների միջեւ առկա տարաձայնությունների մասին:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ հինգ տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ վերանայում է այն դրույթները, որոնց վերաբերյալ վերապահումներ է արել, համեմատում է դրանք իր ազգային օրենսդրության դրույթների հետ եւ ավանդապահին ծանուցում է այդ վերանայման արդյունքների մասին:
3. Վերապահում արած յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ ամբողջությամբ կամ մասամբ չեղյալ հայտարարել տվյալ վերապահումը՝ այդ մասին ավանդապահին ծանուցելով եւ նշելով չեղյալ հայտարարելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

Տարածքային կիրառելիությունը

Հոդված 30

1. Յանկացած Պայմանավորվող կողմ սույն Կոնվենցիան առանց վավերացման մասին վերապահման ստորագրելիս կամ վավերացման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս կամ դրանից հետո ցանկացած ժամանակ կարող է ավանդապահին ծանուցելու միջոցով հայտարարել այն մասին, որ սույն Կոնվենցիայի գործողությունը տարածվում է բոլոր կամ ցանկացած առանձին այն տարածքների վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար այդ կողմը պատասխանատվություն է կրում: Այդ ծանուցումն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից այն ստանալու օրվանից երեք ամիս հետո: Այնուամենայնիվ, սույն Կոնվենցիան չի կիրառվում ծանուցման մեջ նշված տարածքների նկատմամբ՝ նախքան այդ Պայմանավորվող կողմի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելը:
2. Յանկացած Պայմանավորվող կողմ, որը սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ծանուցել է այն տարածքի նկատմամբ սույն Կոնվենցիայի գործողությունը տարածելու մասին, որի միջազգային հարաբերությունների համար այդ կողմը պատասխանատվություն է կրում, կարող է սույն Կոնվենցիայի 31-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան ծանուցել ավանդապահին, որ տվյալ տարածքում սույն Կոնվենցիան այլևս չի կիրառվելու:

Դադարեցումը

Հոդված 31

1. Սույն Կոնվենցիան ունի գործողության անսահմանափակ ժամկետ, սակայն ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է այն դադարեցնել ցանկացած ժամանակ՝ սույն Կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո:
2. Դադարեցման մասին ծանուցվում է գրավոր փաստաթղթով, որն ի պահ է տրվում ավանդապահին:
3. Դադարեցումն ուժի մեջ է մտնում դադարեցման մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից վեց ամիս հետո:
4. Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաեւ սույն Կոնվենցիայի հավելվածների նկատմամբ, որոնք ընդունելու իր համաձայնությունը ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է, սույն Կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել մեկ կամ մեկից ավելի հավելվածների ընդունումը: Յանկացած Պայմանավորվող կողմ, որը հետ է վերցնում բոլոր հավելվածներն ընդունելու վերաբերյալ իր համաձայնությունը, համարվում է, որ այդ Պայմանավորվող կողմը չեղյալ է հայտարարել սույն Կոնվենցիան: Ավելին, եթե Պայմանավորվող կողմը հետ է վերցնում Ա հավելվածն ընդունելու վերաբերյալ իր համաձայնությունը, սակայն շարունակում է ընդունել մյուս հավելվածները, համարվում է, որ այդ Պայմանավորվող կողմը չեղյալ է հայտարարել սույն Կոնվենցիան:

Փոփոխությունների ընթացակարգը

Հոդված 32

1. Սույն Կոնվենցիայի 22-րդ հոդվածին համապատասխան նիստեր գումարող Վարչական կոմիտեն կարող է փոփոխություններ առաջարկել սույն Կոնվենցիայում եւ դրա հավելվածներում:
2. Այս կերպ առաջարկվող փոփոխության տեքստը ավանդապահի կողմից ուղարկվում է սույն Կոնվենցիայի բոլոր Պայմանավորվող կողմերին, այլ ստորագրող կողմերին եւ Խորհրդի այն անդամներին, որոնք սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմեր չեն:
3. Նախորդ կետի համաձայն ներկայացված փոփոխություն անելու վերաբերյալ ցանկացած առաջարկություն բոլոր Պայմանավորվող կողմերի համար ուժի մեջ է մտնում առաջարկվող փոփոխության մասին հաղորդելու օրվան հաջորդող տասներկու ամսվա ժամկետը լրանալու օրվանից վեց ամիս հետո, եթե որեւէ Պայմանավորվող կողմ այդ ժամանակահատվածում ավանդապահին չի ծանուցել առաջարկվող փոփոխության վերաբերյալ առարկության մասին:
4. Եթե սույն հոդվածի 3-րդ կետում նշված տասներկու ամսվա ժամկետը լրանալուց առաջ որեւէ Պայմանավորվող կողմ ծանուցել է ավանդապահին առաջարկվող փոփոխության վերաբերյալ առարկության մասին, ապա փոփոխությունը համարվում է չընդունված եւ որեւէ ուժ չունի:
5. Առարկության վերաբերյալ ծանուցում ներկայացնելու նպատակներով, յուրաքանչյուր հավելված դիտարկվում է որպես առանձին Կոնվենցիա:

Փոփոխությունների ընդունումը

Հոդված 33

1. Համարվում է, որ սույն Կոնվենցիան վավերացնող կամ Կոնվենցիային միացող ցանկացած Պայմանավորվող կողմ ընդունել է դրա մեջ կատարված բոլոր փոփոխությունները, որոնք ուժի մեջ են եղել վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվա դրությամբ:
2. Սույն Կոնվենցիայի որեւէ հավելված ընդունող Պայմանավորվող կողմ, եթե սույն Կոնվենցիայի 29-րդ հոդվածին համապատասխան վերապահումներ չի արել, համարվում է, որ ընդունում է այդ հավելվածում արված ցանկացած փոփոխություն, որն ուժի մեջ է Պայմանավորվող կողմի կողմից ավանդապահին ընդունման մասին ծանուցելու օրվա դրությամբ:

Գրանցումը եւ տեքստերի հավասարազորությունը

Հոդված 34

Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածի համաձայն՝ սույն Կոնվենցիան ենթակա է գրանցման Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում՝ ավանդապահի դիմումի հիման վրա:

Ի վկայումն որի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Ստամբուլում՝ հազար ինը հարյուր իննսուն թվականի հունիսի քսանվեցին, մեկ բնօրինակով՝ անգլերեն եւ ֆրանսերեն, ընդ որում՝ երկու տեքստերը հավասարազոր են: Ավանդատուին խնդրանք է ներկայացվում պատրաստել եւ շրջանառել սույն Կոնվենցիայի արաբերեն, չինարեն, ռուսերեն եւ իսպաներեն պաշտոնական թարգմանությունները:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ՀԱՎԵԼՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐ (ԱՏԱ ԿԱՌՆԵՏՆԵՐ) ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐ (ԿՊԴ ԿԱՌՆԵՏՆԵՐ))

ԳԼՈՒԽ I

Սահմանումներ

Հոդված 1

Սույն հավելվածի նպատակներով՝

ա) «Ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր» եզրույթը նշանակում է՝

միջազգային մաքսային փաստաթուղթ, որն ընդունվում է որպես մաքսային հայտարարագիր եւ հնարավոր է դարձնում ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) նույնականացումը, եւ որը ներառում է ներմուծման տուրքերն ու հարկերը ծածկող՝ միջազգայնորեն վավեր երաշխիք,

բ) «Ժամանակավոր ներմուծման գրքույկ (ԱՏԱ կառնետ)» եզրույթը նշանակում է՝

Ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր, որոնք օգտագործվում են ապրանքների Ժամանակավոր ներմուծման համար՝ բացառությամբ տրանսպորտային միջոցների,

գ) «մաքսային անցման գրքույկ (ԿՊԴ կառնետ)» եզրույթը նշանակում է՝

Ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր, որոնք օգտագործվում են տրանսպորտային միջոցների Ժամանակավոր ներմուծման համար,

դ) «երաշխավորման ցանց» եզրույթը նշանակում է՝

երաշխավորման համակարգ, որը կառավարվում է միջազգային կազմակերպության կողմից, որի կազմի մեջ են մտնում երաշխավորող միավորումները,

ե) «միջազգային կազմակերպություն» եզրույթը նշանակում է՝

կազմակերպություն, որի կազմի մեջ են մտնում Ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր երաշխավորելու եւ տրամադրելու լիազորություն ունեցող ազգային միավորումները,

զ) «երաշխավորող միավորում» եզրույթը նշանակում է՝

միավորում, որը Պայմանավորվող կողմի մաքսային մարմինների կողմից ճանաչվել է որպես այդ Պայմանավորվող կողմի տարածքում սույն հավելվածի 8-րդ հոդվածում նշված գումարները երաշխավորող եւ մտնում է երաշխավորման ցանցի կազմի մեջ,

- է) «Ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր տրամադրող միավորում» եզրույթը նշանակում է՝

մաքսային մարմինների կողմից ճանաչված միավորում, որը տրամադրում է ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր եւ ուղղակի կամ անուղղակի կերպով մտնում է երաշխավորման ցանցի կազմի մեջ,

- ը) «Ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր տրամադրող համապատասխան միավորում» եզրույթը նշանակում է՝

մեկ այլ Պայմանավորվող կողմի տարածքում հիմնադրված ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր տրամադրող միավորում, որը մտնում է միեւնույն երաշխավորման ցանցի կազմի մեջ,

- թ) «մաքսային տարանցում» եզրույթը նշանակում է՝

մաքսային ընթացակարգ, որով ապրանքները մաքսային հսկողության ներքո տեղափոխվում են մեկ մաքսային մարմնից մյուս մաքսային մարմին:

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

1. Սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, իր ազգային մաքսային փաստաթղթերի փոխարեն եւ որպես սույն հավելվածի 8-րդ հոդվածում նշված գումարների մասով պատշաճ երաշխիք, ընդունում է իր տարածքում վավեր համարվող ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը, որոնք սույն հավելվածում սահմանված պայմանների համաձայն՝ տրամադրվում եւ օգտագործվում են այն ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) համար, որոնք ժամանակավոր ներմուծվել են Պայմանավորվող կողմի ընդունած՝ սույն Կոնվենցիայի մյուս հավելվածների համաձայն:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ժամանակավոր ներմուծման գործողությունների նպատակով կարող է նաեւ ընդունել նույն պայմաններով տրամադրված եւ օգտագործված ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը՝ իր ազգային օրենքներին եւ կանոնակարգերին համապատասխան:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ընդունել նույն պայմաններով տրամադրված եւ օգտագործված ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը մաքսային տարանցման համար:
4. Այն ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները), որոնք նախատեսված են վերամշակման կամ վերանորոգման համար, չեն կարող ներմուծվել ժամանակավոր ներմուծման փաստաթղթերով:

Հոդված 3

1. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը պետք է համապատասխանեն սույն հավելվածի ենթահավելվածներում սահմանված ձեւանմուշներին՝ I ենթահավելվածը՝ ժամանակավոր ներմուծման գրքույկի (ԱՏԱ կառնետ) համար, իսկ II ենթահավելվածը՝ մաքսային անցման գրքույկի (ԿՊԴ կառնետ) համար:
2. Սույն հավելվածի ենթահավելվածները կազմում են սույն հավելվածի անբաժանելի մասը:

ԳԼՈՒԽ III

Երաշխիք եւ ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի տրամադրում

Հոդված 4

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, իր կողմից որոշված պայմանների եւ երաշխիքների համաձայն, կարող է լիազորել երաշխավորող միավորումներին՝ հանդես գալ որպես երաշխավոր եւ տրամադրել ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր ուղղակի կերպով կամ ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր տրամադրող միավորումների միջոցով:
2. Որեւէ երաշխավորող միավորում չի կարող ճանաչվել Պայմանավորվող կողմի կողմից, եթե այդ երաշխավորող միավորման երաշխիքը չի ծածկում այն պարտավորությունները, որոնք ծագել են տվյալ Պայմանավորվող կողմի տարածքում՝ ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր տրամադրող համապատասխան միավորման կողմից տրամադրած ժամանակավոր ներմուծման փաստաթղթերով իրականացվող գործողությունների համար:

Հոդված 5

1. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր տրամադրող միավորումները չպետք է տրամադրեն ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր, որոնց վավերականության ժամկետը գերազանցում է մեկ տարին՝ տրամադրման ամսաթվից սկսած:

2. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր տրամադրող միավորումների կողմից ժամանակավոր ներմուծման փաստաթղթերում ներառված տվյալները կարող են փոփոխվել միայն ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր տրամադրող կամ երաշխավորող միավորման համաձայնությամբ: Ժամանակավոր ներմուծման տարածքի մաքսային մարմինների կողմից այդ փաստաթղթերն ընդունելուց հետո որեւէ փոփոխություն չի կարող կատարվել դրանցում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա արվում է այդ մարմինների համաձայնությամբ:
3. Ժամանակավոր ներմուծման գրքույկ (ԱՏԱ կառնետ) տրամադրումից հետո հավելյալ կետեր չպետք է ավելացվեն գրքույկի առջեւի կազմի դարձերեսին կամ դրան կցված հավելյալ էջի վրա թվարկված ապրանքների ցանկին (Ընդհանուր ցանկ):

Հոդված 6

Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերում նշվում են հետեւյալ տվյալները.

- ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր տրամադրող միավորման անվանումը,
- միջազգային երաշխավորման ցանցի անվանումը,
- այն երկրները կամ մաքսային տարածքները, որտեղ ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը վավեր են, եւ
- տվյալ երկրների կամ մաքսային տարածքների երաշխավորող միավորումների անվանումները:

Հոդված 7

Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերով ներմուծված ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) վերաարտահանման համար սահմանված ժամկետը չի կարող գերազանցել այդ փաստաթղթերի վավերականության ժամկետը:

ԳԼՈՒԽ IV

Երաշխիք

Հոդված 8

1. Յուրաքանչյուր երաշխավորող միավորում պարտավորվում է իր հիմնադրման վայրի Պայմանավորվող կողմի մաքսային մարմիններին վճարել ներմուծման տուրքեր, հարկեր եւ ցանկացած այլ գումար, բացառությամբ սույն Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 4-րդ կետում նշված գումարների, որը ենթակա է վճարման ժամանակավոր ներմուծման կամ մաքսային տարանցման պայմանները չպահպանելու դեպքում՝ ժամանակավոր ներմուծման փաստաթղթեր տրամադրող համապատասխան միավորման կողմից

տրամադրված ժամանակավոր ներմուծման փաստաթղթերով այդ տարածք ներմուծված ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) համար: Այդ գումարների վճարման համար միավորումը համապարտ պատասխանատվություն է կրում այն անձանց հետ միասին, որոնց կողմից վերոնշյալ գումարները ենթակա են վճարման:

2. Ժամանակավոր ներմուծման գրքույկ (ԱՏԱ կառնետ)

Երաշխավորող միավորման պարտավորությունը չի կարող տասը տոկոսից ավելի գերազանցել ներմուծման տուրքերի եւ հարկերի գումարը:

Մաքսային անցման գրքույկ (ԿՊԴ կառնետ)

Երաշխավորող միավորումից չի կարող պահանջվել վճարել ավելի մեծ գումար, քան ներմուծման տուրքերի եւ հարկերի ընդհանուր գումարն է՝ տոկոսի հետ միասին, եթե կիրառելի է:

3. Եթե ժամանակավոր ներմուծման տարածքի մաքսային մարմինները որոշակի ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) համար անվերապահորեն չեղյալ են համարում ժամանակավոր ներմուծման փաստաթղթերը, ապա նրանք այլևս չեն կարող երաշխավորող միավորումից պահանջել սույն հոդվածի 1-ին կետում նշված գումարների վճարումը այդ ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) համար: Այնուամենայնիվ, երաշխավորող միավորման դեմ կարող է պահանջ ներկայացվել, եթե հետագայում պարզվի, որ փաստաթղթերը չեղյալ համարելը կատարվել է ոչ պատշաճ կերպով կամ խարդախությամբ, կամ տեղի է ունեցել ժամանակավոր ներմուծման կամ մաքսային տարանցման պայմանների խախտում:

4. Ժամանակավոր ներմուծման գրքույկ (ԱՏԱ կառնետ)

Մաքսային մարմինները երաշխավորող միավորումից չեն կարող պահանջել վճարել սույն հոդվածի 1-ին կետում նշված գումարները, եթե երաշխավորող միավորմանը պահանջ չի ներկայացվել ժամանակավոր ներմուծման գրքույկի (ԱՏԱ կառնետ) վավերականության ժամկետը լրանալուց հետո մեկ տարվա ընթացքում:

5. Մաքսային անցման գրքույկ (ԿՊԴ կառնետ)

Մաքսային մարմինները երաշխավորող միավորումից չեն կարող պահանջել վճարել սույն հոդվածի 1-ին կետում նշված գումարները, եթե երաշխավորող միավորումը չի ծանուցվել մաքսային անցման գրքույկը (ԿՊԴ կառնետ) չեզրափակելու մասին՝ կառնետի վավերականության ժամկետը լրանալուց հետո մեկ տարվա ընթացքում: Ավելին, մաքսային մարմինները պետք է երաշխավորող միավորմանը տրամադրեն չեզրափակման մասին ծանուցումից հետո՝ մեկ տարվա ընթացքում վճարման ենթակա ներմուծման տուրքերի եւ հարկերի հաշվարկման մանրամասները: Այդ գումարների մասով երաշխավորող միավորման պարտավորությունը դադարում է, եթե այդ մասին տեղեկատվություն չի ներկայացվում տվյալ մեկ տարվա ընթացքում:

ԳԼՈՒԽ V

Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերի կանոնավորումը

Հոդված 9

1. Ժամանակավոր ներմուծման գրքույկ (ԱՏԱ կառնետ)

- ա) Սույն հավելվածի 8-րդ հոդվածի 1-ին կետում նշված գումարների համար մաքսային մարմինների կողմից պահանջ ներկայացնելու օրվանից հետո երաշխավորող միավորմանը տրամադրվում է վեցամսյա ժամկետ, որի ընթացքում պետք է ներկայացնել սույն հավելվածում սահմանված պայմանների համաձայն վերաարտահանման կամ ժամանակավոր ներմուծման գրքույկը (ԱՏԱ կառնետ) այլ՝ պատշաճ կերպով եզրափակելու վերաբերյալ ապացույցներ:
- բ) Այն դեպքում, երբ այդ ապացույցները չեն ներկայացվում սահմանված ժամկետում, երաշխավորող միավորումը անմիջապես դեպոնացնում կամ պայմանականորեն վճարում է այդ գումարները: Դեպոնացումը կամ վճարումը վերջնական է դառնում դեպոնացման կամ վճարում կատարելու օրվանից երեք ամիս հետո: Այդ ժամկետի ընթացքում երաշխավորող միավորումը դեռևս կարող է ներկայացնել սույն կետի «ա» ենթակետում նշված ապացույց՝ դեպոնացված կամ վճարված գումարները վերադարձնելու նպատակով:
- գ) Այն Պայմանավորվող կողմերի համար, որոնց օրենքներով եւ կանոնակարգերով չի նախատեսվում ներմուծման տուրքերի եւ հարկերի դեպոնացում կամ պայմանական վճարում, սույն կետի «բ» ենթակետի դրույթներին համապատասխան կատարված վճարումները համարվում են վերջնական, սակայն վճարված գումարները վերադարձվում են, եթե սույն կետի «ա» ենթակետում նշված ապացույցները ներկայացվում են վճարման օրվանից հետո երեք ամսվա ընթացքում:

2. Մաքսային անցման գրքույկ (ԿՊԴ կառնետ)

- ա) Մաքսային անցման գրքույկը (ԿՊԴ կառնետ) չեզրափակելու մասին ծանուցման օրվանից հետո երաշխավորող միավորմանը տրամադրվում է մեկ տարի ժամկետ, որի ընթացքում այն պարտավոր է ներկայացնել սույն հավելվածում սահմանված պայմաններին համապատասխան վերաարտահանման կամ մաքսային անցման գրքույկը (ԿՊԴ կառնետ) այլ՝ պատշաճ կերպով եզրափակելու վերաբերյալ ապացույցներ: Այնուամենայնիվ, այս ժամկետը կարող է գործել միայն մաքսային անցման գրքույկի (ԿՊԴ կառնետ) ժամկետը լրանալու օրվա դրությամբ: Եթե մաքսային մարմինները վիճարկում են ներկայացված ապացույցների հիմնավորված լինելու փաստը, նրանք պետք է այդ մասին տեղեկացնեն երաշխավորող միավորմանը՝ մեկ տարին չգերազանցող ժամկետում:
- բ) Այն դեպքում, երբ այդ ապացույցները չեն ներկայացվում սահմանված ժամկետում, երաշխավորող միավորումը առավելագույնը երեք ամիս ժամկետով դեպոնացնում կամ պայմանականորեն վճարում է վճարման ենթակա ներմուծման տուրքերն ու հարկերը: Դեպոնացումը կամ վճարումը վերջնական է դառնում դեպոնացման կամ վճարում կատարելու օրվանից մեկ տարի հետո: Այդ ժամկետի ընթացքում

երաշխավորող միավորումը դեռևս կարող է ներկայացնել սույն կետի «ա» ենթակետում նշված ապացույցը՝ դեպոնացված կամ վճարված գումարները վերադարձնելու նպատակով:

- գ) Այն Պայմանավորվող կողմերի համար, որոնց օրենքներով եւ կանոնակարգերով չի նախատեսվում ներմուծման տուրքերի եւ հարկերի դեպոնացում կամ պայմանական վճարում, սույն կետի «բ» ենթակետի դրույթներին համապատասխան կատարված վճարումները համարվում են վերջնական, սակայն վճարված գումարները վերադարձվում են, եթե սույն կետի «ա» ենթակետում նշված ապացույցները ներկայացվում են վճարման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Հոդված 10

1. Ժամանակավոր ներմուծման փաստաթղթերով ներմուծված ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) վերաարտահանելու վերաբերյալ ապացույցը տրամադրվում է ժամանակավոր ներմուծման տարածքի մաքսային մարմինների կողմից լրացված եւ կնքված՝ վերաարտահանման կտրոնի միջոցով:
2. Եթե վերաարտահանումը չի հաստատվել սույն հոդվածի 1-ին կետի համաձայն, ժամանակավոր ներմուծման տարածքի մաքսային մարմինները, եթե անգամ փաստաթղթերի վավերականության ժամկետն արդեն լրացել է, կարող են որպես վերաարտահանման ապացույց ընդունել.
 - ա) այլ Պայմանավորվող կողմի մաքսային մարմինների կողմից ժամանակավոր ներմուծման փաստաթղթերում ներմուծման կամ վերաներմուծման վերաբերյալ լրացված տվյալները կամ այդ մարմինների կողմից տրամադրված հավաստագիրը՝ հիմնված իրենց տարածք ներմուծելու կամ վերաներմուծելու համար ժամանակավոր ներմուծման փաստաթղթերից անջատված վաուչերում լրացված տվյալների վրա՝ պայմանով, որ տվյալներն առնչվում են ներմուծմանը կամ վերաներմուծմանը, ինչը կարելի է ապացուցել, որ տեղի է ունեցել վերաարտահանումից հետո, ինչի ապացուցմանն էլ այն միտված է:
 - բ) փաստաթղթերով ամրապնդված ցանկացած այլ ապացույց առ այն, որ ապրանքները (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները) գտնվում են այդ տարածքից դուրս:
3. Այն դեպքում, երբ Պայմանավորվող կողմի մաքսային մարմինները հրաժարվում են ժամանակավոր ներմուծման փաստաթղթերով իրենց տարածք ներմուծված որոշակի ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) վերաարտահանման պահանջից, երաշխավորող միավորումն ազատվում է իր պարտավորություններից միայն այն դեպքում, երբ այդ մարմինները փաստաթղթերով հաստատում են, որ այդ ապրանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների) նկատմամբ դիրքորոշումը կարգավորվել է:

Հոդված 11

This carnet, which has been drawn up in accordance with the provisions of the Customs Conventions on the Temporary Importation of Private Road Vehicles (1954) and Commercial Road Vehicles (1956), both amended in 1992, may be used in the following countries under guarantee of the authorized associations indicated: /

Ce carnet, qui a été élaboré selon les dispositions des Conventions douanières relatives à l'importation temporaire des véhicules routiers privés (1954) et des véhicules routiers commerciaux (1956), révisées en 1992, peut être utilisé dans les pays suivants, sous la garantie des associations autorisées ci-après.

AFRICA

Benin: Automobile Club de France
Bophuthatswana: Automobile Association of South Africa
Botswana: Automobile Association of South Africa
Burkina Faso: Automobile Club de France
Cameroun: Automobile Club de France
Central African Republic: Automobile Club de France
Chad: Automobile Club de France
Ciskei: Automobile Association of South Africa
Comoros: Automobile Club de France
Congo: Automobile Club de France
Egypt: Automobile & Touring Club d'Egypte
Gabon: Automobile Club de France
Guinea-Bissau: Automobile Club de France
Ivory Coast: Automobile Club de France
Kenya: Automobile Association of Kenya
Lesotho: Automobile Association of South Africa
Libya: Automobile & Touring Club de Libye
Madagascar: Automobile Club de France
Malawi: Automobile Association of Zimbabwe
Mali: Automobile Club de France
Mauritania: Automobile Club de France
Namibia: Automobile Association of South Africa
Niger: Automobile Club de France
Senegal: Touring Club du Sénégal
South Africa (Republic of):
Automobile Association of South Africa
Swaziland: Automobile Association of South Africa
Togo: Automobile Club de France
Zimbabwe: Automobile Association of Zimbabwe

AMERICA

Argentina: Automovil Club Argentino
Canada: Canadian Automobile Association
Chile: Automovil Club de Chile
Colombia: Touring y Automovil Club de Colombia
Costa Rica: Automovil - Touring Club de Costa Rica
Dutch Antilles: Koninklijke Nederlandse Toeristenbond ANWB
Ecuador: Automovil Club del Ecuador (ANETA)
Mexico: Automovil Club de Mexico
Paraguay: Touring y Automovil Club Paraguayo
Peru: Touring y Automovil Club del Peru
Surinam: Koninklijke Nederlandse Toeristenbond ANWB
Trinidad & Tobago: Trinidad & Tobago Automobile Association
Uruguay: Automovil Club del Uruguay
Venezuela: Touring y Automovil Club de Venezuela

ASIA & THE MIDDLE EAST

Bahrain: Qatar Automobile and Touring Club
Bangladesh: Automobile Association of Bangladesh
India: Federation of Indian Automobile Associations
Indonesia: Ikatan Motor Indonesia
Iran: Touring and Automobile Club Islamic Republic of Iran
Iraq: Iraq Automobile and Touring Association
Japan: Japan Automobile Federation (JAF)
Jordan: Royal Automobile Club of Jordan
Kuwait: Kuwait Automobile and Touring Club
Lebanon: Automobile et Touring Club du Liban
Malaysia: Automobile Association of Malaysia
Oman: Oman Automobile Association
Pakistan: Automobile Association of Pakistan
Qatar: Qatar Automobile and Touring Club
Singapore: Automobile Association of Singapore
Sri Lanka: Automobile Association of Ceylon
Syria: Automobile Club de Syrie
United Arab Emirates:
Automobile & Touring Club for United Arab Emirates

EUROPE

Belgium*: Royal Automobile Club de Belgique
Denmark*: Forenede Danske Motorejere
Finland*: Automobile and Touring Club of Finland (Autoliitto)
Greece*: Automobile and Touring Club of Greece (ELPA)
Italy*: Automobile Club d'Italia
Monaco*: Automobile Club de France
Netherlands: Koninklijke Nederlandse Toeristenbond ANWB
Turkey*: Türkiye Turing ve Otomobil Kurumu (TTOK)

OCEANIA

Australia: Australian Automobile Association
New Zealand: New Zealand Automobile Association
Vanuatu: Automobile Club de France

* In these countries, the carnet is required only for certain categories of vehicles.
Dans ces pays, le carnet est exigé uniquement pour certaines catégories de véhicules.

Սույն Կառնետը, որը կազմվել է 1992 թվականին փոփոխության ենթարկված «Մասնավոր ճանապարհային տրանսպորտային միջոցների մասին» (1954 թվական) եւ «Կոմերցիոն ճանապարհային տրանսպորտային միջոցների մասին» (1956 թվական) մաքսային կոնվենցիաների դրույթներին համապատասխան, կարող է օգտագործվել հետեյալ երկրներում՝ նշված լիազորված միավորումների երաշխիքով: /

Ce carnet, qui a été élaboré selon les dispositions des Conventions douanières relatives à l'importation temporaire des véhicules routiers privés (1954) et des véhicules routiers commerciaux (1956), révisées en 1992, peut être utilisé dans les pays suivants, sous la garantie des associations autorisées ci-après.

ԱՖՐԻԿԱ

Քենին^{*} Automobile Club de France
Բուտսվանա^{*} Automobile Association of South Africa
Բոտսվանա^{*} Automobile Association of South Africa
Բուրկինա Ֆասո^{*} Automobile Club de France
Կամերուն^{*} Automobile Club de France
Կենտրոնաֆրիկյան Հանրապետություն^{*} Automobile Club de France
Չադ^{*} Automobile Club de France
Սիսկեյ^{*} Automobile Association of South Africa
Կոմորյան կղզիներ^{*} Automobile Club de France
Կոնգո^{*} Automobile Club de France
Եգիպտոս^{*} Automobile & Touring Club d'Egypte
Գաբոն^{*} Automobile Club de France
Գվինեա-Բիսաու^{*} Automobile Club de France
Կոդ Դ՝Իվուար^{*} Automobile Club de France
Քենիա^{*} Automobile Association of Kenya
Լեսոտո^{*} Automobile Association of South Africa
Լիբիա^{*} Automobile & Touring Club de Libye
Մադագասկար^{*} Automobile Club de France
Մալավի^{*} Automobile Association of Zimbabwe
Մալի^{*} Automobile Club de France
Մավրիտանիա^{*} Automobile Club de France
Նամիբիա^{*} Automobile Association of South Africa
Նիգերիա^{*} Automobile Club de France
Սենեգալ^{*} Touring Club du Sénégal
Հարավային Աֆրիկա (Հանրապետություն)^{*} Automobile Association of South Africa
Սվազիլենդ^{*} Automobile Association of South Africa
Տոգո^{*} Automobile Club de France
Հիմբաբվե^{*} Automobile Association of Zimbabwe

ԱՄԵՐԻԿԱ

Արգենտինա^{*} Automovil Club Argentino
Կանադա^{*} Canadian Automobile Association
Չիլի^{*} Automovil Club de Chile
Կոլումբիա^{*} Touring y Automovil Club de Colombia
Կոստա Ռիկա^{*} Automovil - Touring Club de Costa Rica
Նիդեռլանդական Անտիլյան Կղզիներ^{*} Koninklijke Nederlandse Toeristenbond ANWB
Էկվադոր^{*} Automovil Club del Ecuador (ANETA)
Մեքսիկա^{*} Automovil Club de Mexico
Պարագվայ^{*} Touring y Automovil Club Paraguay
Պերու^{*} Touring y Automovil Club del Peru
Սուրինամ^{*} Koninklijke Nederlandse Toeristenbond ANWB
Տրինիդադ եւ Տոբագո^{*} Trinidad & Tobago Automobile Association
Ուրուգվայ^{*} Automovil Club del Uruguay

ԱՍԻԱ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Բահրեյն^{*} Qatar Automobile and Touring Club
Բանգլադեշ^{*} Automobile Association of Bangladesh
Հնդկաստան^{*} Federation of Indian Automobile Associations
Ինդոնեզիա^{*} Ikatan Motor Indonesia
Իրան^{*} Touring and Automobile Club Islamic Republic of Iran
Իրաք^{*} Iraq Automobile and Touring Association
Ճապոնիա^{*} Japan Automobile Federation (JAF)
Հորդանան^{*} Royal Automobile Club of Jordan
Քուվեյթ^{*} Kuwait Automobile and Touring Club
Լիբանան^{*} Automobile et Touring Club du Liban
Մալայզիա^{*} Automobile Association of Malaysia
Օման^{*} Oman Automobile Association
Պակիստան^{*} Automobile Association of Pakistan
Կատար^{*} Qatar Automobile and Touring Club
Սինգապուր^{*} Automobile Association of Singapore
Շրի Լանկա^{*} Automobile Association of Ceylon
Սիրիա^{*} Automobile-Club de Syrie
Արաբական Միացյալ Էմիրություններ^{*} Automobile & Touring Club for United Arab Emirates

ԵՎՐՈՊԱ

Բելգիա^{**} Royal Automobile Club de Belgique
Դանիա^{**} Forenede Danske Motorejere
Ֆինլանդիա^{**} Automobile and Touring Club of Finland (Autoliitto)
Հունաստան^{**} Automobile and Touring Club of Greece (ELPA)
Իտալիա^{**} Automobile Club d'Italia
Մոնակո^{**} Automobile Club de France
Նիդեռլանդներ^{*} Koninklijke Nederlandse Toeristenbond ANWB
Թուրքիա^{**} Türkiye Turing ve Otomobil Kurumu (TTOK)

ՕՎԿԻԱՆԻԱ

Ավստրալիա^{*} Australian Automobile Association
Նոր Զելանդիա^{*} New Zealand Automobile Association
Վանուատու^{*} Automobile Club de France

* Այս երկրներում կառնետն անհրաժեշտ է տրանսպորտային միջոցների միայն կոնկրետ կատեգորիաների համար:
Dans ces pays, le carnet est exigé uniquement pour certaines catégories de véhicules.

ՀԱՎԵԼՎԱԾ Բ.1.

ՀԱՎԵԼՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ, ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՆ ԿԱՄ ՆՄԱՆԱՏԻՊ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԴՐՎՈՂ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Սահմանումներ

Հոդված 1

Սույն հավելվածի նպատակներով «միջոցառում» հասկացությունը նշանակում է.

1. առեւտրային, արդյունաբերական, գյուղատնտեսական կամ արհեստների ցուցահանդես, տոնավաճառ կամ նմանատիպ ցուցադրում կամ ցուցադրություն.
2. հիմնականում բարեգործական նպատակով կազմակերպված ցուցահանդես կամ հանդիպում.
3. ցուցահանդես կամ հանդիպում, որը հիմնականում կազմակերպվել է՝ խթանելու համարուման, արվեստի, արհեստի, սպորտի որեւէ ճյուղ կամ գիտական, կրթական կամ մշակութային գործունեություն, կրոնական գիտելիքները կամ պաշտամունքը, զբոսաշրջությունը կամ ժողովուրդների միջեւ բարեկամությունը.
4. ցանկացած միջազգային կազմակերպության կամ կազմակերպությունների միջազգային խմբի ներկայացուցիչների հանդիպում.
5. պաշտոնական կամ հիշատակման բնույթի ներկայացուցչական հանդիպում՝

բացառությամբ խանութներում կամ ձեռնարկատիրական կառույցներում օտարերկրյա ապրանքների վաճառքի համար մասնավոր նպատակներով կազմակերպված ցուցահանդեսների:

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

1. Սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակավոր ներմուծման իրավունք են ստանում հետևյալ ապրանքները.
 - ա) միջոցառման ժամանակ ցուցադրման կամ ներկայացման համար նախատեսված ապրանքները՝ ներառյալ այն նյութերը, որոնք նշված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ 1950 թվականի նոյեմբերի 22-ին Նյու Յորքում կնքված «Կրթական, գիտական եւ մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» համաձայնագրի հավելվածներում եւ 1976 թվականի նոյեմբերի 26-ին Նայրոբիում կնքված Արձանագրության մեջ.
 - բ) միջոցառմանը օտարերկրյա ապրանքների ցուցադրման ժամանակ օգտագործման համար ապրանքներ, ներառյալ՝
 - i) ցուցադրվող օտարերկրյա սարքավորումների կամ ապարատների ցուցադրման համար անհրաժեշտ ապրանքներ.
 - ii) շինարարական եւ հարդարման նյութեր՝ ներառյալ էլեկտրական պարագաները՝ նախատեսված օտարերկրյա ապրանքների ցուցադրման ժամանակավոր տաղավարների համար.
 - iii) գովազդային եւ ցուցադրական նյութ, որն ակնհայտորեն հանդիսանում է ցուցադրվող օտարերկրյա ապրանքների գովազդային նյութ, օրինակ՝ ձայնագրություններ եւ տեսագրություններ, ֆիլմեր եւ սլայդներ, ինչպես նաեւ դրանց հետ օգտագործվող ապարատներ.
 - գ) սարքավորումներ՝ ներառյալ թարգմանական սարքերը, ձայնագրման եւ տեսագրման ապարատները եւ կրթական, գիտական կամ մշակութային բնույթի ֆիլմեր՝ նախատեսված միջազգային հանդիպումներին, համաժողովներին կամ համագումարներին օգտագործելու համար:
2. Սույն հավելվածում նշված հնարավորությունների կիրառման համար՝
 - ա) յուրաքանչյուր ապրանքի թիվը կամ քանակը պետք է լինի ողջամիտ՝ հաշվի առնելով ներմուծման նպատակը.
 - բ) ժամանակավոր ներմուծման տարածքի մաքսային մարմինները պետք է համոզված լինեն, որ սույն Կոնվենցիայի պայմանները կկատարվեն:

ԳԼՈՒԽ III

Այլ դրույթներ

Հոդված 3

Ժամանակավոր ներմուծման իրավունք ստացած ապրանքները սույն Կոնվենցիայով տրված հնարավորությունների առարկա հանդիսանալու ընթացքում չեն կարող՝

- ա) փոխառության առարկա լինել կամ որեւէ կերպ օգտագործվել վարձակալության կամ պարգեւատրման համար, կամ
- բ) տեղափոխվել միջոցառման վայրից:

Հոդված 4

1. Ցուցահանդեսներին, տոնավաճառներին, հանդիպումներին կամ նմանատիպ միջոցառումներին ցուցադրելու կամ օգտագործելու նպատակով ներմուծված ապրանքների վերաարտահանման համար ժամկետն առնվազն վեց ամիս է, որը հաշվարկվում է ժամանակավոր ներմուծման օրվանից:
2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ մաքսային մարմինները թույլ են տալիս, որ հաջորդող որեւէ միջոցառման ժամանակ ցուցադրման կամ օգտագործման համար նախատեսված ապրանքները մնան ժամանակավոր ներմուծման տարածքում՝ այդ տարածքի օրենքներով եւ կանոնակարգերով սահմանված պայմաններին համապատասխան, եւ պայմանով, որ ապրանքները վերաարտահանվեն ժամանակավոր ներմուծման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում:

Հոդված 5

1. Սույն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ ներքին սպառման համար բաց թողնելը թույլատրվում է առանց ներմուծման տուրքեր ու հարկեր գանձելու եւ առանց հետեւյալ ապրանքների նկատմամբ ներմուծման արգելքներ կամ սահմանափակումներ կիրառելու՝
 - ա) միջոցառմանը ցուցադրվող օտարերկրյա ապրանքների փոքր նմուշներ՝ ներառյալ սննդի եւ խմիչքների այնպիսի նմուշները, որոնք ներմուծվել են նմուշների տեսքով կամ պատրաստվել են այդ միջոցառման համար ներմուծված բալք նյութերից՝ պայմանով, որ.

- i) դրանք արտասահմանից մատակարարվում են անվճար եւ օգտագործվում են բացառապես միջոցառմանն այցելող հանրությանն անվճար բաժանելու նպատակով՝ այդ անձանց կողմից անձնական օգտագործման կամ սպառման համար.
 - ii) դրանք հնարավոր է նույնականացնել որպես գովազդային նմուշներ, եւ առանձին վերցված՝ ունեն փոքր արժեք.
 - iii) դրանք պիտանի չեն առետրային նպատակների համար եւ համապատասխան դեպքերում փաթեթավորված են ամենափոքր մանրածախ փաթեթավորումից զգալիորեն ավելի փոքր քանակություններով.
 - iv) սննդի եւ խմիչքների նմուշները, որոնք չեն բաժանվում վերոնշյալ «iii» ենթակետով նախատեսված փաթեթավորմամբ, պետք է սպառվեն այդ միջոցառմանը. եւ
 - v) ժամանակավոր ներմուծման տարածքի մաքսային մարմինների կարծիքով՝ նմուշների ընդհանուր արժեքը եւ քանակը ողջամիտ է՝ հաշվի առնելով միջոցառման բնույթը, այցելուների թիվը եւ այդ միջոցառմանը ցուցադրողի մասնակցության աստիճանը.
- բ) միջոցառմանը միայն ցուցադրման կամ օտարերկրյա սարքի կամ ապարատի աշխատանքի ներկայացման նպատակով ներմուծված ապրանքներ, որոնք սպառվում կամ ոչնչացվում են ցուցադրման ընթացքում՝ պայմանով, որ ժամանակավոր ներմուծման տարածքի մաքսային մարմինների կարծիքով՝ այդ ապրանքների ընդհանուր արժեքը եւ քանակը ողջամիտ է՝ հաշվի առնելով միջոցառման բնույթը, այցելուների թիվը եւ այդ միջոցառմանը ցուցադրողի մասնակցության աստիճանը.
- գ) միջոցառմանն օտարերկրյա ապրանքների ցուցադրման նպատակով ժամանակավոր տաղավարները կառուցելու, կահավորելու կամ հարդարելու համար օգտագործվող ցածրարժեք ապրանքներ, ինչպիսիք են ներկը, լաքը եւ պաստառը.
- դ) տպագիր նյութեր, կատալոգներ, առետրային ծանուցումներ, գնացուցակներ, գովազդային պաստառներ, օրացույցներ՝ պատկերազարդ կամ ոչ պատկերազարդ, եւ առանց շրջանակի լուսանկարներ, որոնք ակնհայտորեն միջոցառմանը ցուցադրվող օտարերկրյա ապրանքների գովազդային նյութ են՝ պայմանով, որ.
- i) դրանք արտասահմանից մատակարարվում են անվճար եւ օգտագործվում են բացառապես միջոցառմանն այցելող հանրությանն անվճար բաժանելու նպատակով. եւ
 - ii) ժամանակավոր ներմուծման տարածքի մաքսային մարմինների կարծիքով՝ այդ ապրանքների ընդհանուր արժեքը եւ քանակը ողջամիտ է՝ հաշվի առնելով

միջոցառման բնույթը, այցելուների թիվը եւ այդ միջոցառմանը ցուցադրողի մասնակցության աստիճանը.

- ե) թղթապանակներ, տեղեկագրեր, ձեւաթղթեր եւ այլ փաստաթղթեր, որոնք ներմուծվում են, որպես այդպիսին, միջազգային հանդիպումներին, համաժողովներին կամ համագումարներին կամ դրանց հետ կապված նպատակներով օգտագործվելու համար:
2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառելի չեն ակոհողային խմիչքների, ծխախոտային ապրանքների եւ վառելիքի դեպքում:

Հոդված 6

1. Միջոցառմանը ցուցադրման կամ օգտագործման ենթակա կամ ցուցադրված կամ օգտագործված ապրանքների մաքսային զննումը եւ ներմուծման ու վերաարտահանման ժամանակ մաքսազերծումը բոլոր հնարավոր եւ համապատասխան դեպքերում իրականացվում է այդ միջոցառման ժամանակ:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, անհրաժեշտության դեպքում, միջոցներ է ձեռնարկում իր տարածքում անցկացվող միջոցառման վայրում ողջամիտ ժամանակահատվածով հիմնել մաքսակետ՝ պայմանավորված միջոցառման կարեւորությունով ու չափով:

Հոդված 7

Միջոցառման ընթացքում ժամանակավոր ներմուծված ապրանքներից պատահաբար ստացված արտադրանքի համար, որը ստացվել է ցուցադրված սարքավորումների կամ ապարատների ցուցադրման արդյունքում, գործում են սույն Կոնվենցիայի դրույթները:

Հոդված 8

Սույն Կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի վերապահում անել սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի վերաբերյալ:

Հոդված 9

Սույն հավելվածն ուժի մեջ մտնելուց հետո, սույն Կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն, ուժը կորցրած է ճանաչվում եւ փոխարինվում է 1961 թվականի հունիսի 8-ին

Բրյուսելում կնքված՝ «Ցուցահանդեսներին, տոնավաճառներին, հանդիպումներին կամ նմանատիպ միջոցառումներին ցուցադրման կամ օգտագործման նպատակով ապրանքների ներմուծման պայմանների մասին մաքսային կոնվենցիան» այն Պայմանավորվող կողմերի միջեւ, որոնք ընդունել են սույն հավելվածը եւ այդ Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ են:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ.2.

ՀԱՎԵԼՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Սահմանում

Հոդված 1

Սույն հավելվածի նպատակներով, «մասնագիտական սարքավորումներ» հասկացությունը նշանակում է.

1. Մամուլի կամ ծայնային կամ հեռուստատեսային հեռարձակման համար նախատեսված սարքավորումներ, որոնք անհրաժեշտ են այլ երկրի տարածք այցելող մամուլի կամ հեռարձակման կամ հեռուստատեսային կազմակերպությունների ներկայացուցիչներին հաղորդման նպատակով կամ որոշակի ծրագրերի համար նյութ ուղարկելու կամ ձայնագրելու համար: Այդ սարքավորումների նկարագրական ցանկը ներկայացված է սույն հավելվածի I ենթահավելվածում:
2. Կինեմատոգրաֆիական սարքավորումներ, որոնք անհրաժեշտ են այլ երկրի տարածք այցելող անձին որոշակի ֆիլմ կամ ֆիլմեր նկարահանելու համար: Այդ սարքավորումների նկարագրական ցանկը ներկայացված է սույն հավելվածի II ենթահավելվածում:
3. Ցանկացած այլ սարքավորում, որն անհրաժեշտ է զանգելու, առեւտուր կամ մասնագիտական այլ նպատակ իրականացնելու համար այն անձի կողմից, որն այցելում է այլ երկրի տարածք՝ որոշակի առաջադրանք կատարելու համար: Այն չի ներառում այնպիսի սարքավորումները, որոնք օգտագործվում են ապրանքների արդյունաբերական արտադրության կամ փաթեթավորման համար կամ (բացառությամբ ձեռքի գործիքների օգտագործման դեպքերի) բնական ռեսուրսների շահագործման, շինությունների կառուցման, վերանորոգման կամ պահպանման, հող փորելու եւ նման նախագծերի համար: Այդ սարքավորումների նկարագրական ցանկը ներկայացված է սույն հավելվածի III ենթահավելվածում:
4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերում նշված սարքավորումների համար նախատեսված օժանդակ ապարատներ եւ դրանց լրակազմեր:

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

Սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակավոր ներմուծման իրավունք են ստանում հետևյալ ապրանքները.

- ա) մասնագիտական սարքավորումները,
- բ) վերոնշյալ «ա» ենթակետի համաձայն ժամանակավոր ներմուծված մասնագիտական սարքավորումների վերանորոգման համար ներմուծված բաղադրիչ մասերը:

ԳԼՈՒԽ III

Այլ դրույթներ

Հոդված 3

1. Սույն հավելվածով տրամադրվող հնարավորությունների կիրառման համար մասնագիտական սարքավորումները պետք է.
 - ա) լինեն ժամանակավոր ներմուծման տարածքից դուրս հիմնադրված կամ բնակվող անձի սեփականությունը,
 - բ) ներմուծված լինեն ժամանակավոր ներմուծման տարածքից դուրս հիմնադրված կամ բնակվող անձի կողմից,
 - գ) օգտագործվեն բացառապես ժամանակավոր ներմուծման տարածք այցելող անձի կողմից կամ նրա անձնական հսկողության ներքո:
2. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը չի կիրառվում այն սարքավորումների դեպքում, որոնք ներմուծվել են ֆիլմի, հեռուստատեսային ծրագրի կամ տեսաձայնային աշխատանքների կատարման համար՝ համաձայն համատեղ արտադրության պայմանագրի, որի ստորագրող կողմ է ժամանակավոր ներմուծման տարածքում հիմնադրված անձը, եւ որը հաստատված է այդ տարածքի իրավասու մարմինների կողմից՝ համաձայն համատեղ արտադրության մասին միջկառավարական համաձայնագրի:

3. Կինեմատոգրաֆիական սարքավորումները եւ մամուլի կամ ծայնային կամ հեռուստատեսային հեռարձակման սարքավորումները չեն կարող լինել վարձակալության այնպիսի պայմանագրի կամ համանման պայմանավորվածության առարկա, որի ստորագրող կողմ է ժամանակավոր ներմուծման տարածքում հիմնադրված անձը՝ պայմանով, որ այս պայմանը չի կիրառվում ծայնային կամ հեռուստատեսային հեռարձակման համատեղ ծրագրերի դեպքում:

Հոդված 4

1. Ժամանակավոր ներմուծման տարածքի մաքսային մարմինների կողմից հաստատված՝ հանրային կամ մասնավոր մարմինների կողմից ներմուծված ռադիո- եւ հեռուստատեսային արտադրության ու հեռարձակման սարքավորումների եւ հատուկ հարմարեցված ռադիո- կամ հեռուստատեսային շրջիկ կայանների ու դրանց սարքավորումների ժամանակավոր ներմուծումը թույլատրվում է առանց մաքսային փաստաթղթի կամ երաշխիքի պահանջի:
2. Մաքսային մարմինները կարող են պահանջել, որպեսզի ներկայացվի սույն հոդվածի 1-ին կետում նշված սարքավորումների ցանկը կամ մանրամասն գույքացուցակը՝ վերաարտահանման համար ստանձնած գրավոր պարտավորության հետ միասին:

Հոդված 5

Մասնագիտական սարքավորումների վերաարտահանման ժամկետն առնվազն տասներկու ամիս է, որը հաշվարկվում է ժամանակավոր ներմուծման օրվանից: Այնուամենայնիվ, փոխադրամիջոցների վերաարտահանման ժամկետը կարող է սահմանվել՝ հաշվի առնելով ժամանակավոր ներմուծման տարածքում դրանց մնալու նպատակն ու նախատեսված տեղությունը:

Հոդված 6

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի մերժել կամ հրաժարվել սույն հավելվածի I-ից III ենթահավելվածներում նշված այն փոխադրամիջոցների ժամանակավոր ներմուծումից, որոնք նույնիսկ ոչ պարբերաբար, սակայն վճարի դիմաց տեղափոխում են մարդկանց կամ իրենց տարածքում բեռնում են ապրանք՝ նույն տարածքում որեւէ վայրում մարդկանց իջեցնելու կամ ապրանքը բեռնաթափելու համար:

Հոդված 7

Սույն հավելվածի ենթահավելվածները կազմում են սույն հավելվածի անբաժանելի մասը:

Հոդված 8

Սույն հավելվածն ուժի մեջ մտնելուց հետո, սույն Կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն, ուժը կորցրած է ճանաչվում եւ փոխարինվում է 1961 թվականի հունիսի 8-ին Բրյուսելում կնքված «Մասնագիտական սարքավորումների ժամանակավոր ներմուծման մասին մաքսային կոնվենցիան» այն Պայմանավորվող կողմերի միջեւ, որոնք ընդունել են սույն հավելվածը եւ այդ Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ են:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ I

Մամուլի կամ ձայնային կամ հեռուստատեսային հեռարձակման համար նախատեսված սարքավորումներ

Նկարագրական ցանկ

Ա. Մամուլի համար նախատեսված սարքավորումներ, ինչպիսիք են՝

- անձնական համակարգիչները.
- հեռաՖաքսի սարքավորումները.
- գրամեքենաները.
- բոլոր տեսակի խցիկները (ժապավենային եւ էլեկտրոնային խցիկներ).
- ձայնի կամ պատկերի հաղորդման, ձայնագրման կամ վերարտադրման ապարատները (ձայնագրիչներ, տեսաձայնագրիչներ եւ տեսագրության վերարտադրիչներ, միկրոֆոններ, ձայնակառավարման վահանակներ, բարձրախոսներ).
- ձայնի կամ պատկերի գրառման կրիչները՝ դատարկ կամ գրառված.
- փորձարկման եւ չափման գործիքներն ու ապարատները (տատանագրիչներ, ձայնագրիչների եւ տեսաձայնագրիչների փորձարկման համակարգեր, բազմաչափիչներ, գործիքների արկղեր եւ պայուսակներ, վեկտորային վերլուծիչներ, վիդեոգեներատորներ եւ այլն).
- լուսավորման սարքավորումները (լուսարձակներ, փոխարկիչներ, եռոտանիներ).
- աշխատանքային պարագաները (կասետներ, լուսակայացույցներ, տեսապակիներ, եռոտանիներ, կուտակիչներ, մարտկոցների գոտիներ, մարտկոցների լիցքավորիչներ, մոնիտորներ):

Բ. Ձայնային հեռարձակման սարքավորումներ, ինչպիսիք են՝

- հեռահաղորդակցության սարքավորումները, ինչպիսիք են ընդունիչ-հաղորդիչ ռադիոկայանները կամ ռադիոհաղորդիչները, ցանցին կամ մալուխին միացվող տերմինալները, արբանյակային կապի գծերը.
- ձայնային հաճախականության սարքավորումները (ձայնահանիչ, ձայնագրման կամ վերարտադրման ապարատներ).
- փորձարկիչ եւ չափիչ գործիքներն ու ապարատները (տատանագրիչներ, ձայնագրիչների եւ տեսաձայնագրիչների փորձարկման համակարգեր,

բազմաշափիչներ, գործիքների արկղեր եւ պայուսակներ, վեկտորային վերլուծիչներ, վիդեոգեներատորներ եւ այլն)։

- աշխատանքային պարագաները (ժամացույցներ, վայրկենաշափեր, կողմնացույցներ, միկրոֆոններ, ձայնակառավարման վահանակներ, ձայներիզներ, գեներատորային ագրեգատներ, տրանսֆորմատորներ, մարտկոցներ եւ կուտակիչներ, մարտկոցների լիցքավորիչներ, ջեռուցման, օդորակման եւ օդափոխման ապարատներ եւ այլն)։
- ձայնի գրառման կրիչները՝ դատարկ կամ գրառված։

Գ. Հեռուստատեսային հեռարձակման սարքավորումներ, ինչպիսիք են՝

- հեռուստատեսային խցիկները.
- կինեմատոգրաֆ սարքը.
- փորձարկիչ եւ չափիչ գործիքներն ու ապարատները.
- հաղորդիչ եւ վերահաղորդիչ ապարատները.
- հաղորդակցման ապարատները.
- ձայնի կամ պատկերի գրառման կամ վերարտադրան ապարատները (ձայնագրիչներ, տեսաձայնագրիչներ եւ տեսագրության վերարտադրիչներ, միկրոֆոններ, ձայնակառավարման վահանակներ, բարձրախոսներ)։
- լուսավորման սարքավորումները (լուսարձակներ, փոխարկիչներ, եռոտանիներ)։
- մոնտաժային սարքավորումները.
- աշխատանքային պարագաները (ժամացույցներ, վայրկենաշափեր, կողմնացույցներ, տեսապակիներ, լուսակայացույցներ, եռոտանիներ, մարտկոցների լիցքավորիչներ, կասետներ, գեներատորային ագրեգատներ, տրանսֆորմատորներ, մարտկոցներ եւ կուտակիչներ, ջեռուցման, օդորակման եւ օդափոխման ապարատներ եւ այլն)։
- ձայնի կամ պատկերի գրառման կրիչները՝ դատարկ կամ գրառված (ներածական տիտրեր, կայանի կանչեր, երաժշտական ներդիրներ եւ այլն)։
- ֆիլմերի նկարահանման առաջին օրինակները.
- երաժշտական գործիքները, զգեստները, բեմահարդարանքն ու բեմի այլ պարագաները, պատվանդանները, շպարի նյութերը, վարսահարդարիչները։

Դ. Վերոնշյալ նպատակների համար նախատեսված կամ հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոցները, ինչպիսիք են՝

- Հեռուստատեսային հեռարձակման համար նախատեսված տրանսպորտային միջոցները.
- հեռուստատեսային լրացուցիչ պարագաների համար նախատեսված տրանսպորտային միջոցները.
- տեսաներիզների ծայնագրման համար նախատեսված փոխադրամիջոցները.
- ծայնի գրառման եւ վերարտադրման տրանսպորտային միջոցները.
- դանդաղընթաց փոխադրամիջոցները.
- թեթեւ մարդատար տրանսպորտային միջոցները:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ II

Կինեմատոգրաֆիական սարքավորումներ

Նկարագրական ցանկ

Ա. Այնպիսի սարքավորումներ, ինչպիսիք են՝

- բոլոր տեսակի խցիկները (ժապավենային եւ էլեկտրոնային խցիկներ).
- փորձարկիչ եւ չափիչ գործիքներն ու ապարատները (տատանագրիչներ, ձայնագրիչների եւ տեսաձայնագրիչների փորձարկման համակարգեր, բազմաչափիչներ, գործիքների արկղեր եւ պայուսակներ, վեկտորային վերլուծիչներ, վիդեոգեներատորներ եւ այլն).
- օպերատորական սայլակներն ու կռունկները.
- լուսավորման սարքավորումները (լուսարձակներ, փոխարկիչներ, եռոտանիներ).
- մոնտաժային սարքավորումները.
- ձայնի կամ պատկերի գրառման կամ վերարտադրման ապարատները (ձայնագրիչներ, տեսաձայնագրիչներ եւ տեսագրության վերարտադրիչներ, միկրոֆոններ, ձայնակառավարման վահանակներ, բարձրախոսներ).
- ձայնի կամ պատկերի գրառման կրիչները՝ դատարկ կամ գրառված (ներածական տիտրեր, կայանի կանչեր, երաժշտական ներդիրներ եւ այլն).
- ֆիլմերի նկարահանման առաջին օրինակները.
- աշխատանքային պարագաները (ժամացույցներ, վայրկենաչափեր, կողմնացույցներ, միկրոֆոններ, ձայնակառավարման վահանակներ, կասետներ, գեներատորային ագրեգատներ, տրանսֆորմատորներ, մարտկոցներ եւ կուտակիչներ, մարտկոցների լիցքավորիչներ, ջեռուցման, օդորակման եւ օդափոխման ապարատներ եւ այլն).
- երաժշտական գործիքները, զգեստները, բեմահարդարանքն ու բեմի այլ պարագաները, պատվանդանները, շպարի նյութերը, վարսահարդարիչները:

Բ. Վերոնշյալ նպատակների համար նախատեսված կամ հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոցները:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ III

Այլ սարքավորումներ

Նկարագրական ցանկ

- Ա. Մեխանիզմների, սարքավորումների, տրանսպորտային միջոցների եւ այլնի հավաքման, փորձարկման, շահագործման, ստուգման, հսկողության, տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման սարքավորումներ, ինչպիսիք են՝
- գործիքները.
 - չափիչ, ստուգիչ կամ փորձարկիչ սարքավորումներն ու գործիքները (ջերմաստիճան, ճնշում, հեռավորություն, բարձրություն, մակերես, արագություն եւ այլն), ներառյալ էլեկտրական գործիքները (վոլտաչափեր, ամպերաչափեր, չափիչ մալուխներ, համեմատող սարքեր, տրանսֆորմատորներ, ձայնագրիչ գործիքներ եւ այլն) եւ սեւեռիչները.
 - հավաքումից հետո կամ դրա ընթացքում մեխանիզմներն ու սարքերը լուսանկարելու ապարատներն ու սարքավորումները.
 - նավերի ստուգման ապարատները:
- Բ. Գործարարներին, բիզնեսի արդյունավետության գծով խորհրդատուներին, արդյունավետության գծով փորձագետներին, հաշվապահներին եւ համանման մասնագիտությունների տեր անձանց անհրաժեշտ սարքավորումներ, ինչպիսիք են՝
- անձնական համակարգիչները.
 - գրամեքենաները.
 - ձայնի կամ պատկերի հաղորդման, ձայնագրման կամ վերարտադրման ապարատները.
 - հաշվիչ գործիքներն ու ապարատները:
- Գ. Տեղագրական հետազոտություններ կամ գեոֆիզիկական պլանավորման աշխատանքներ իրականացնող փորձագետներին անհրաժեշտ սարքավորումներ, ինչպիսիք են՝
- չափիչ գործիքներն ու ապարատները.
 - շաղափող սարքավորումները.
 - փոխանցման եւ հաղորդակցման սարքավորումները:

- Դ. Աղտոտման դեմ պայքարող փորձագետներին անհրաժեշտ սարքավորումները:
- Ե. Բժիշկներին, վիրաբույժներին, անասնաբույժ վիրաբույժներին, մանկաբարձուհիներին եւ համանման մասնագիտությունների տեր անձանց անհրաժեշտ գործիքներն ու սարքերը:
- Զ. Հնագետներին, հնէաբաններին, աշխարհագրագետներին, կենդանաբաններին եւ այլ գիտնականներին անհրաժեշտ սարքավորումները:
- Է. Համերգավարներին, թատերական ընկերություններին եւ նվագախմբերին անհրաժեշտ սարքավորումները, ներառյալ հանրային կամ մասնավոր ներկայացումների համար օգտագործվող բոլոր իրերը (երաժշտական գործիքներ, զգեստներ, բեմահարդարանք եւ այլն):
- Ը. Դասախոսներին իրենց դասախոսությունները ցուցադրելու համար անհրաժեշտ սարքավորումները:
- Թ. Լուսանկարչական նպատակներով ճանապարհորդությունների համար անհրաժեշտ սարքավորումները (բոլոր տեսակի խցիկներ, կասետներ, լուսակայացույցներ, տեսապակիներ, եռոտանիներ, կուտակիչներ, մարտկոցների գոտիներ, մարտկոցների լիցքավորիչներ, մոնիտորներ, լուսավորման սարքավորումներ, նորաձեւության իրեր եւ պարագաներ մոդելների համար եւ այլն):
- Ժ. Վերոնշյալ նպատակների համար նախատեսված կամ հատուկ հարմարեցված փոխադրամիջոցները, ինչպիսիք են զննման շարժական միավորները, շրջիկ արհեստանոցներն ու լաբորատորիաները:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ.3.

ՀԱՎԵԼՎԱԾ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԲԵՌՆԱՐԿՆԵՐԻ, ՏԱԿՆՈՑՆԵՐԻ, ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐԻ, ՆՄՈՒՇՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Սահմանումներ

Հոդված 1

Սույն Հավելվածի նպատակներով՝

- ա) «Առետրային գործունեության համար ներմուծված ապրանքներ» եզրույթը նշանակում է՝ բեռնարկղեր, տակնոցներ, փաթեթվածքներ, նմուշներ, գովազդային ֆիլմեր եւ ցանկացած այլ ապրանք, որը ներմուծվել է առետրային գործունեության համար, սակայն որի ներմուծումն առետրային գործունեություն չէ:
- բ) «Փաթեթվածք» եզրույթը նշանակում է՝ բոլոր այն իրերը եւ նյութերը, որոնք օգտագործվել են կամ պետք է օգտագործվեն այն վիճակում, որում ներմուծվել են՝ խոտնաբեռն ներմուծված ապրանքները փաթեթավորելու, պաշտպանելու, տեղավորելու կամ առանձնացնելու համար՝ բացառությամբ փաթեթավորման այնպիսի նյութերի, ինչպիսիք են ծղոտը, թուղթը, ապակեթելը, տաշեղները եւ այլն: Սույն հոդվածի, համապատասխանաբար, «գ» եւ «դ» կետերով սահմանված բեռնարկղերն ու տակնոցները նույնպես բացառվում են:
- գ) «Բեռնարկղ» եզրույթը նշանակում է՝ տրանսպորտային սարքավորման միավոր (բեռնատար վագոն, հանովի ցիստեռն կամ նմանատիպ այլ հարմարանք), որը՝
 - i) ամբողջությամբ կամ մասամբ փակված խցիկ է՝ բեռներ պարունակելու համար.
 - ii) կայուն է եւ, հետեւաբար, բավականին ամուր՝ բազմակի օգտագործման համար.
 - iii) հատուկ նախատեսված է տրանսպորտի մեկ կամ մի քանի տեսակներով բեռների փոխադրումը դյուրացնելու համար՝ առանց միջանկյալ վերաբեռնման.
 - iv) նախատեսված է հեշտ բեռնման-բեռնաթափման համար, մասնավորապես, տրանսպորտի մի տեսակից մյուսը փոխադրելու ժամանակ.

v) նախատեսված է հեշտությամբ բեռնելու եւ բեռնաթափելու համար. եւ

vi) ունի մեկ խորանարդ մետր կամ ավելի ներքին ծավալ:

«Բեռնարկղ» եզրույթը ներառում է բեռնարկղի տվյալ տեսակին համապատասխան հարմարանքներ ու սարքավորումներ՝ պայմանով, որ այդ հարմարանքներն ու սարքավորումները փոխադրվում են բեռնարկղի հետ միասին: «Բեռնարկղ» եզրույթը չի ներառում փոխադրամիջոցները, փոխադրամիջոցների հարմարանքները կամ պահեստամասերը, փաթեթվածքը կամ տակնոցները: «Հանովի թափքերը» համարվում են բեռնարկղեր:

դ) «Տակնոց» եզրույթը նշանակում է՝

հարմարանք, որի հարթակի վրա կարելի է որպես բեռի միավոր հավաքել ապրանքների որոշակի քանակություն՝ այն փոխադրելու կամ բեռնելու կամ մեխանիկական սարքավորումների միջոցով իրար վրա տեղավորելու նպատակով: Այս հարմարանքը բաղկացած է հենարաններով առանձնացված երկու հարթակից կամ ոտքերով ամրացված մեկ հարթակից: Դրա ընդհանուր բարձրությունը հասցված է նվազագույնի՝ երկժանի բեռնիչների կամ տակնոցային բեռնիչների կողմից բեռնմանը համապատասխանելու համար: Այն կարող է ունենալ կամ չունենալ վերնակառույց:

ե) «Նմուշներ» եզրույթը նշանակում է՝

ապրանքներ, որոնք ներկայացնում են արդեն արտադրված ապրանքների որոշակի կատեգորիա, կամ որոնց արտադրությունը ծրագրվում է, սակայն այս եզրույթը չի ներառում նույն անձի կողմից ներմուծված կամ մեկ բեռ ստացողին ուղարկված այնպիսի քանակությամբ համանման ապրանքները, որոնք, ընդհանուր վերցրած, սովորական առևտրային օգտագործման իմաստով այլևս նմուշներ չեն:

զ) «Գովազդային ֆիլմեր» եզրույթը նշանակում է՝

ձայնագրված ցուցադրման միջոց՝ ձայնով կամ առանց ձայնի, որը հիմնականում բաղկացած է ժամանակավոր ներմուծման տարածքից դուրս հաստատված կամ ռեզիդենտ անձի կողմից վաճառքի կամ վարձակալության դրված ապրանքների կամ սարքավորումների բնույթը կամ աշխատանքը ցուցադրող պատկերներից՝ պայմանով, որ այդ ֆիլմերը հարմար լինեն հնարավոր հաճախորդներին ցուցադրության համար, բայց ոչ հանրությանը ընդհանուր ցուցադրության համար, եւ ներմուծվեն յուրաքանչյուր ֆիլմից ոչ ավելի, քան մեկ օրինակ պարունակող փաթեթվածքով, որը ֆիլմերի ավելի մեծ խմբաքանակի մաս չէ:

է) «Ներքին փոխադրում» եզրույթը նշանակում է՝

Պայմանավորվող կողմի մաքսային տարածքում բեռնված ապրանքների փոխադրում՝ նույն Պայմանավորվող կողմի մաքսային տարածքի որեւէ վայրում բեռնաթափելու նպատակով:

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

Սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակավոր ներմուծման թույլտվություն են ստանում առետրային գործողության համար ներմուծված հետեւյալ ապրանքները՝

- ա) փաթեթվածքներ, որոնք ներմուծվում են բեռնված՝ վերաարտահանման համար դատարկվելու կամ բեռնվելու նպատակով, կամ ներմուծվում են դատարկ՝ վերաարտահանելիս բեռնվելու համար.
- բ) բեռնարկղեր՝ ապրանքներով բեռնված կամ առանց դրանց, եւ լրացուցիչ պարագաներ ու սարքավորումներ՝ ժամանակավորապես ներմուծված բեռնարկղերի համար, որոնք կամ ներմուծվում են բեռնարկղի հետ՝ առանձին կամ մեկ այլ բեռնարկղի հետ վերաարտահանվելու նպատակով, կամ ներմուծվում են առանձին՝ բեռնարկղի հետ վերաարտահանվելու նպատակով.
- գ) բաղադրիչ մասեր՝ նախատեսված սույն հոդվածի «բ» կետի համաձայն ժամանակավոր ներմուծման թույլտվություն ստացած բեռնարկղերի վերանորոգման համար.
- դ) տակնոցներ.
- ե) նմուշներ.
- զ) գովազդային ֆիլմեր.
- է) այլ ապրանքներ, որոնք ներմուծվում են առետրային գործողության համար՝ սույն Հավելվածի I ենթահավելվածում նշված որեւէ նպատակով, սակայն որոնց ներմուծումն ինքնին առետրային գործողություն չէ:

ԳԼՈՒԽ III

Այլ դրույթներ

Հոդված 3

Սույն Հավելվածի դրույթները չեն ազդում Պայմանավորվող կողմերի՝ բեռնարկղերով, փաթեթվածքներով կամ տակնոցների վրա փոխադրվող ապրանքների ներմուծմանն առնչվող մաքսային օրենսդրության վրա:

Հոդված 4

1. Սույն Հավելվածով տրվող հնարավորությունների կիրառման նպատակով՝
 - ա) փաթեթվածքները կարող են վերաարտահանվել միայն այն անձի կողմից, որին տրամադրվել են ժամանակավոր ներմուծման հնարավորությունները: Նույնիսկ պատահականորեն դրանք չպետք է օգտագործվեն ներքին փոխադրումներում.
 - բ) բեռնարկերը պետք է մակնշվեն սույն Հավելվածի II ենթահավելվածում նախատեսված կարգով: Դրանք կարող են օգտագործվել ապրանքները ներքին փոխադրմամբ փոխադրելու համար, որի դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի սահմանելու հետեւյալ պայմանները՝
 - երթը պետք է բեռնարկը ողջամտորեն ուղիղ երթուղով հասցնի այն վայր կամ մոտեցնի այն վայրին, որտեղ արտահանման բեռը պետք է բեռնվի, կամ որտեղից բեռնարկը պետք է դատարկ արտահանվի.
 - բեռնարկը, նախքան վերաարտահանվելը, օգտագործվում է միայն մեկ անգամ՝ ներքին փոխադրման համար.
 - գ) տակնոցները կամ նույն տեսակի եւ հիմնականում նույն արժեքն ունեցող նույն թվով տակնոցները պետք է լինեն նախապես արտահանված, կամ դրանք հետագայում կարտահանվեն կամ կվերաարտահանվեն.
 - դ) նմուշները եւ գովազդային ֆիլմերը պետք է լինեն ժամանակավոր ներմուծման տարածքից դուրս հաստատված կամ ռեզիդենտ անձի սեփականություն եւ պետք է ներմուծվեն բացառապես ժամանակավոր ներմուծման տարածքում ցուցադրվելու կամ ներկայացվելու նպատակով՝ այդ տարածք ներմուծման ենթակա ապրանքների պատվերները խրախուսելու համար: Դրանք չեն կարող վաճառվել կամ հանձնվել սովորական շահագործման՝ բացառությամբ ցուցադրման նպատակներով շահագործման, կամ որեւէ այլ կերպ օգտագործվել՝ ժամանակավոր ներմուծման տարածքում գտնվելու ընթացքում վարձակալության կամ պարգեւատրման համար.
 - ե) սույն Հավելվածի I ենթահավելվածի 1-ին եւ 2-րդ կետերում նշված ապրանքները չեն օգտագործվում շահույթ հետապնդող գործունեության համար:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի մերժելու այն բեռնարկերի, տակնոցների կամ փաթեթվածքների ժամանակավոր ներմուծումը, որոնք եղել են գնման, ապառիկով գնման, վարձակալության կամ նմանատիպ բնույթի այլ պայմանագրի առարկա՝ կնքված իր տարածքում հաստատված կամ ռեզիդենտ անձի կողմից:

Հոդված 5

1. Բեռնարկերի, տակնոցների եւ փաթեթվածքների ժամանակավոր ներմուծումը թույլատրվում է առանց մաքսային փաստաթղթի կամ երաշխիքի պահանջի:
2. Ժամանակավոր ներմուծման հնարավորություններ ստացող անձից բեռնարկերի համար մաքսային փաստաթղթի եւ երաշխիքի փոխարեն կարող է պահանջվել գրավոր ստանձնել հետեւյալը՝
 - i) մաքսային մարմիններին, վերջիններիս խնդրանքով, տրամադրել մանրամասն տեղեկություններ ժամանակավոր ներմուծման թույլտվություն ստացած յուրաքանչյուր բեռնարկի փոխադրումների վերաբերյալ՝ ներառյալ ժամանակավոր ներմուծման տարածք մուտքի եւ ելքի ամսաթվերը եւ վայրերը, կամ բեռնարկերի ցանկը՝ վերաարտահանման պարտավորագրի հետ.
 - ii) վճարել ներմուծման այն տուրքերն ու հարկերը, որոնք կարող են պահանջվել ժամանակավոր ներմուծման պայմանները չկատարելու դեպքում:
3. Ժամանակավոր ներմուծման հնարավորություններ ստացող անձից տակնոցների եւ փաթեթվածքների համար մաքսային փաստաթղթի եւ երաշխիքի փոխարեն կարող է պահանջվել մաքսային մարմիններ ներկայացնել վերաարտահանման պարտավորագիր:
4. Ժամանակավոր ներմուծման ընթացակարգից պարբերաբար օգտվող անձանց թույլատրվում է տրամադրել ընդհանուր պարտավորագիր:

Հոդված 6

Առեւտրային գործողության համար ներմուծված ապրանքների վերաարտահանման ժամկետը ժամանակավոր ներմուծման օրվանից հետո առնվազն վեց ամիս է:

Հոդված 7

Սույն Կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի կատարելու վերապահում սույն Հավելվածի՝

- ա) 2-րդ հոդվածում թվարկված ապրանքների՝ ոչ ավելի, քան երեք խմբի առնչությամբ.
- բ) 5-րդ հոդվածի 1-ին կետի առնչությամբ:

Հոդված 8

Սույն Հավելվածի ենթահավելվածները կազմում են սույն Հավելվածի անբաժանելի մասը:

Հոդված 9

Ուժի մեջ մտնելուց հետո սույն Հավելվածը, սույն Կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն, դադարեցնում եւ փոխարինում է հետեւյալ կոնվենցիաները եւ դրույթներ այն Պայմանավորվող կողմերի միջեւ հարաբերություններում, որոնք ընդունել են սույն Հավելվածը եւ հանդիսանում են այդ կոնվենցիաների Պայմանավորվող կողմեր՝

- Միջազգային փոխադրումներում օգտագործվող տակնոցների մաքսային ռեժիմի մասին եվրոպական կոնվենցիա, Ժնև, 1960 թվականի դեկտեմբերի 9.
- Փաթեթվածքների ժամանակավոր ներմուծման մասին մաքսային կոնվենցիա, Բրյուսել, 1960 թվականի հոկտեմբերի 6.
- Բեռնարկղերի մասին մաքսային կոնվենցիայի 2-11-րդ հոդվածները եւ դրա 1-ից (1-ին եւ 2-րդ կետեր) 3-րդ Հավելվածները, Ժնև, 1972 թվականի դեկտեմբերի 2.
- Առևտրային նմուշների եւ գովազդային նյութերի ներմուծումը դյուրացնելուն ուղղված միջազգային կոնվենցիայի 3-րդ, 5-րդ եւ 6-րդ (1.բ եւ 2-րդ կետեր) հոդվածները, Ժնև, 1952 թվականի նոյեմբերի 7.

այն Պայմանավորվող Կողմերի միջև, որոնք ընդունել են սույն Հավելվածը և հանդիսանում են այդ Կոնվենցիաների Պայմանավորվող կողմեր:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ I

2-րդ հոդվածի «է» կետում նշված ապրանքների ցանկ

1. Փորձարկման, ստուգման, գիտափորձերի կամ ցուցադրումների համար ներմուծված ապրանքներ:
2. Փորձարկման, ստուգման, գիտափորձերի կամ ցուցադրումների համար օգտագործվող ապրանքներ:
3. Տպագիր եւ մշակված կինեմատոգրաֆիական ժապավեն, պոզիտիվներ եւ պատկեր պարունակող տեսագրված այլ կրիչներ՝ նախատեսված նախքան առետրային օգտագործումը դիտելու համար:
4. Ֆիլմեր, մագնիսական ու մագնիսացված ժապավեններ եւ ձայն կամ պատկեր պարունակող այլ կրիչներ՝ նախատեսված ձայնային ուղեկցման, կրկնօրինակման կամ վերարտադրման համար:
5. Անվճար ուղարկված տվյալներ կրող կրիչներ՝ տվյալների ավտոմատ մշակման համար օգտագործելու նպատակով:

6. Իրեր (ներառյալ փոխադրամիջոցները), որոնք իրենց բնույթով հարմար չեն որեւէ այլ նպատակի համար՝ բացի որոշակի ապրանքների գովազդից կամ հատուկ նպատակով տարածումից:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ II

Բեռնարկղերի մակնշմանը վերաբերող դրույթներ

1. Բեռնարկղերի համապատասխան եւ հստակորեն երեւացող տեղում պետք է ամուր մակնշմամբ զետեղվեն հետեւյալ տեղեկությունները՝
 - ա) սեփականատիրոջ կամ հիմնական շահագործողի նույնականացման տվյալները՝ անունը նշելու միջոցով կամ հաստատված նույնականացման տվյալների միջոցով՝ բացառելով այնպիսի խորհրդանիշները, ինչպիսիք են՝ խորհրդանշանները [էմբլեմները] կամ դրոշները.
 - բ) բեռնարկղի նույնականացման նշաններն ու համարները, որոնք տրվել են սեփականատիրոջ կամ հիմնական շահագործողի կողմից. եւ
 - գ) բեռնարկղի քաշը՝ ներառյալ դրան մշտական ամրակցված բոլոր սարքավորումները:
2. Հիմնականում ծովային բեռնափոխադրումների ժամանակ օգտագործվելու համար նախատեսված բեռնարկղերի կամ որեւէ այլ բեռնարկղի դեպքում, որին տրված են ԻՍՕ ստանդարտի տառային նիշեր (այսինքն՝ չորս մեծատառեր, որոնցից վերջինը «Ա»-ն է), սեփականատիրոջ կամ հիմնական շահագործողի նույնականացման տվյալները եւ բեռնարկղի հերթական համարն ու բեռնարկղի հսկիչ նիշը պետք է համապատասխանեն ISO 6346 միջազգային ստանդարտին եւ դրա հավելվածներին:
3. Որպեսզի պլաստիկ ժապավենի միջոցով բեռնարկղի վրա զետեղված նույնականացման նշաններն ու համարները համարվեն ամուր մակնշված, պահանջվում է համապատասխանություն հետեւյալ տեխնիկական պայմաններին՝
 - ա) պետք է օգտագործել բարձրորակ կաշուն նյութ: Օգտագործումից հետո ժապավենի առաձգական ուժը պետք է լինի ավելի ցածր, քան դրա վերջնական կաշումը, որպեսզի անհնար լինի ժապավենը հեռացնել՝ առանց այն վնասելու: Արտադրության՝ ձուլման մեթոդով արտադրված ժապավենը համապատասխանում է այս պահանջներին: Արտադրության՝ մամլելու մեթոդով արտադրված ժապավեն չպետք է օգտագործվի.
 - բ) եթե նույնականացման նշաններն ու համարները պետք է փոփոխվեն, փոխարինվող ժապավենը պետք է ամբողջապես հեռացվի՝ նախքան նոր ժապավեն փակցնելը: Չի թույլատրվում նոր ժապավենը փակցնել հին ժապավենի վրա:
4. Սույն ենթահավելվածի 3-րդ կետով սահմանված՝ բեռնարկղերի մակնշման համար պլաստիկ ժապավենի օգտագործման տեխնիկական պայմանները չեն բացառում ամուր մակնշման այլ մեթոդների օգտագործման հնարավորությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ.4.

ՀԱՎԵԼՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Սահմանումներ

Հոդված 1

Սույն Հավելվածի նպատակներով՝ «արտադրական գործողության համար ներմուծված ապրանքներ» եզրույթը նշանակում է՝

1. ա) կադապարներ, բլոկներ, թիթեղներ, ձուլվածքներ, գծագրեր, պլաններ, մոդելներ եւ նման այլ իրեր.

բ) չափիչ, հսկիչ ու ստուգիչ գործիքներ եւ նման այլ իրեր.

գ) հատուկ գործիքներ եւ գործիքակազմ.

որոնք ներմուծվել են արտադրական գործընթացում օգտագործման նպատակով. եւ

2. «արտադրության փոխարինող միջոցներ»՝

գործիքներ, ապարատներ եւ մեխանիզմներ, որոնք մատակարարողի կամ վերանորոգողի կողմից տրամադրվում են հաճախորդին՝ նախքան համանման ապրանքների առաքումը կամ վերանորոգումը:

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

Արտադրական գործողության համար ներմուծված ապրանքները ստանում են ժամանակավոր ներմուծման թույլտվություն՝ սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն:

ԳԼՈՒԽ III

Այլ դրույթներ

Հոդված 3

Սույն Հավելվածով տրամադրվող հնարավորությունների կիրառման համար՝

- ա) արտադրական գործողության համար ներմուծված ապրանքների սեփականատերը պետք է լինի ժամանակավոր ներմուծման տարածքից դուրս հաստատված անձ, եւ այդ ապրանքները պետք է նախատեսված լինեն այդ տարածքում հաստատված անձի համար.
- բ) սույն Հավելվածի 1-ին հոդվածի 1-ին կետում նշված՝ արտադրական գործողության համար ներմուծված ապրանքների օգտագործումից ստացված արտադրանքն ամբողջությամբ կամ մասամբ, ինչպես պահանջվում է ազգային օրենսդրությամբ, պետք է արտահանվի ժամանակավոր ներմուծման տարածքից.
- գ) արտադրության փոխարինող միջոցները պետք է ժամանակավորապես եւ անվճար տրամադրվեն ժամանակավոր ներմուծման տարածքում հաստատված անձին՝ արտադրության այն միջոցների մատակարարի կողմից կամ միջոցով, որոնց մատակարարումը հետաձգվել է, կամ որոնք պետք է վերանորոգվեն:

Հոդված 4

1. Սույն Հավելվածի 1-ին հոդվածի 1-ին կետում նշված ապրանքների վերաարտահանման ժամկետը ժամանակավոր ներմուծման օրվանից հետո առնվազն տասներկու ամիս է:
2. Արտադրության փոխարինող միջոցների վերաարտահանման ժամկետը ժամանակավոր ներմուծման օրվանից հետո առնվազն վեց ամիս է:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ.5.

ՀԱՎԵԼՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԿԱՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Սահմանումներ

Հոդված 1

Սույն Հավելվածի նպատակներով՝

- ա) «կրթական, գիտական կամ մշակութային նպատակների համար ներմուծված ապրանքներ» եզրույթը նշանակում է՝

գիտական սարքավորումներ, մանկավարժական նյութեր, ծովագնացների բարեկեցությունն ապահովող նյութեր եւ ցանկացած այլ ապրանք՝ ներմուծված կրթական, գիտական կամ մշակութային գործունեության համար.

- բ) վերոնշյալ «ա» ենթակետում՝

- i) «գիտական սարքավորումներ եւ մանկավարժական նյութեր» եզրույթը նշանակում է՝
ցանկացած մոդել, գործիք, ապարատ, մեխանիզմ կամ դրանց օժանդակ մասեր, որոնք օգտագործվում են գիտական հետազոտության կամ կրթական կամ մասնագիտական վերապատրաստման նպատակով.

- ii) «ծովագնացների բարեկեցությունն ապահովող նյութեր» եզրույթը նշանակում է՝
մշակութային, կրթական, ժամանցային, կրոնական կամ սպորտային գործունեություն ծավալելու համար նախատեսված նյութեր, որոնք օգտագործվում են միջազգային ծովային փոխադրումներում ներգրավված օտարերկրյա նավի վրա ծովում աշխատանքի կամ ծառայության առնչությամբ պարտավորություններ ստանձնած անձանց կողմից:

«Մանկավարժական նյութերի», «ծովագնացների բարեկեցությունն ապահովող նյութերի» եւ «կրթական, գիտական կամ մշակութային գործունեության համար ներմուծված ցանկացած այլ ապրանքի» նկարագրական ցանկերը ներկայացված են սույն Հավելվածի, համապատասխանաբար, I, II եւ III ենթահավելվածներում:

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

Սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակավոր ներմուծման թույլտվություն են ստանում հետևյալ ապրանքները՝

- ա) բացառապես կրթական, գիտական կամ մշակութային նպատակների համար ներմուծված ապրանքներ.
- բ) վերոնշյալ «ա» ենթակետի համաձայն ժամանակավոր ներմուծման թույլտվություն ստացած՝ մանկավարժական նյութերի եւ գիտական սարքավորումների պահեստամասեր եւ այդ սարքավորումների պահպանման, ստուգման, չափման կամ վերանորոգման համար հատուկ նախատեսված գործիքներ:

ԳԼՈՒԽ III

Այլ դրույթներ

Հոդված 3

Սույն Հավելվածով տրամադրվող հնարավորությունների կիրառման համար՝

- ա) կրթական, գիտական կամ մշակութային նպատակների համար ներմուծված ապրանքների սեփականատերը պետք է լինի ժամանակավոր ներմուծման տարածքից դուրս հաստատված անձը, եւ դրանք պետք է հաստատված կառույցների կողմից ներմուծվեն ողջամիտ քանակությամբ՝ հաշվի առնելով ներմուծման նպատակը: Դրանք չպետք է օգտագործվեն առետրային նպատակների համար.
- բ) ծովագնացների բարեկեցությունն ապահովող նյութերը պետք է օգտագործվեն միջազգային ծովային փոխադրումներում ներգրավված օտարերկրյա նավերի վրա կամ պետք է նավից բեռնաթափվեն՝ նավի աշխատակազմի կողմից ավիին ժամանակավոր օգտագործման համար, կամ պետք է ներմուծվեն՝ պաշտոնական կազմակերպությունների կամ կրոնական կամ շահույթ չհետապնդող այլ կազմակերպությունների կողմից կառավարվող՝ ծովագնացների համար նախատեսված հյուրատներում, ակումբներում կամ ժամանցային կենտրոններում օգտագործման, ինչպես նաեւ այն պաշտամունքի վայրերում համար, որտեղ ծովագնացների համար պարբերաբար արարողություններ են կատարվում:

Հոդված 4

Գիտական սարքավորումների, մանկավարժական նյութերի եւ նավերի վրա օգտագործվող՝ ծովագնացների բարեկեցությունն ապահովող նյութերի ժամանակավոր ներմուծումը թույլատրվում է առանց մաքսային փաստաթղթի կամ երաշխիքի պահանջի: Անհրաժեշտության դեպքում գիտական սարքավորումների եւ մանկավարժական նյութերի համար կարող է պահանջվել գույքացուցակ՝ վերաարտահանման պարտավորագրի հետ:

Հոդված 5

Կրթական, գիտական կամ մշակութային նպատակների համար ներմուծված ապրանքների վերաարտահանման ժամկետը ժամանակավոր ներմուծման օրվանից հետո առնվազն տասներկու ամիս է:

Հոդված 6

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, սույն Կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն, իրավունք ունի վերապահում կատարելու սույն Հավելվածի 4-րդ հոդվածի դրույթների առնչությամբ այնքանով, որքանով դրանք վերաբերում են գիտական սարքավորումներին եւ մանկավարժական նյութերին:

Հոդված 7

Սույն Հավելվածի ենթահավելվածները կազմում են սույն Հավելվածի անբաժանելի մասը:

Հոդված 8

Ուժի մեջ մտնելուց հետո սույն Հավելվածը, սույն Կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն, դադարեցնում եւ փոխարինում է 1964 թվականի դեկտեմբերի 1-ին Բրյուսելում կնքված՝ «Ծովագնացների բարեկեցությունն ապահովող նյութերի մասին» մաքսային կոնվենցիան, 1968 թվականի հունիսի 11-ին Բրյուսելում կնքված՝ «Գիտական սարքավորումների ժամանակավոր ներմուծման մասին» մաքսային կոնվենցիան եւ 1970 թվականի հունիսի 8-ին Բրյուսելում կնքված՝ «Մանկավարժական նյութերի ժամանակավոր ներմուծման մասին» մաքսային կոնվենցիային՝ այն Պայմանավորվող կողմերի միջեւ հարաբերություններում, որոնք ընդունել են սույն Հավելվածը եւ հանդիսանում են այդ կոնվենցիաների Պայմանավորվող կողմ:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ I

Մանկավարժական նյութեր

Նկարագրական ցանկ

- ա) Ձայնագրիչներ կամ տեսաձայնագրիչներ կամ վերաարտադրիչներ, ինչպիսիք են՝
- սլայդների եւ տեսաժապավենի պրոյեկտորները.
 - կինեմատոգրաֆիական պրոյեկտորները.
 - էկրանի հետեւից աշխատող պրոյեկտորները եւ էպիսկոպները.
 - մագնիտոֆոնները, մագնիտոսկոպները եւ վիդեոսարքավորումները.
 - փակ շղթայով հեռուստատեսային սարքավորումները:
- բ) Ձայնային եւ պատկերային կրիչներ, ինչպիսիք են՝
- սլայդները, տեսաժապավենները եւ միկրոժապավենները.
 - կինեմատոգրաֆիական ժապավենները.
 - ձայնագրությունները (մագնիսական ժապավեններ, սկավառակներ).
 - տեսաերիզները:
- գ) Հատուկ նյութեր, ինչպիսիք են՝
- գրադարանների համար նախատեսված մատենագրական սարքավորումներն ու տեսաձայնային նյութերը.
 - շարժական գրադարանները.
 - լեզվի լաբորատորիաները.
 - համաժամանակյա թարգմանության սարքավորումները.
 - ծրագրավորված ուսուցման սարքերը՝ մեխանիկական կամ էլեկտրոնային.
 - հաշմանդամների կրթական կամ մասնագիտական ուսուցման համար հատուկ մշակված նյութերը:
- դ) Այլ նյութեր, ինչպիսիք են՝
- պատի աղյուսակները, մոդելները, դիագրամները, քարտեզները, պլանները, լուսանկարները եւ գծագրերը.

- ցուցադրական նպատակների համար նախատեսված գործիքները, ապարատները եւ մոդելները.
- ցուցադրական կամ ձայնային՝ մանկավարժական տեղեկություններ պարունակող միավորների հավաքածուները՝ պատրաստված առարկայի ուսուցման համար (ուսուցողական հավաքածու).
- առեստրի կամ արհեստի ուսուցման համար նախատեսված գործիքները, ապարատները, սարքերը եւ հաստոցները.
- սարքավորումները, ներառյալ փրկարարական աշխատանքներում օգտագործման համար հատուկ հարմարեցված կամ նախատեսված փոխադրամիջոցները, որոնք ներմուծվում են փրկարարական աշխատանքներում ներգրավված անձանց վերապատրաստման նպատակով:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ II

Ծովագնացների բարեկեցությունն ապահովող նյութեր

Նկարագրական ցանկ

- ա) Ընթերցանության նյութեր, ինչպիսիք են՝
- գրքերը.
 - հեռակա ուսուցման նյութերը.
 - թերթերը, լրագրերը եւ պարբերականները.
 - նավահանգիստներում գտնվող ժամանցի վայրերի վերաբերյալ կառնետները:
- բ) Տեսաձայնային նյութեր, ինչպիսիք են՝
- ձայնի եւ պատկերի վերարտադրման գործիքները.
 - ձայնարկիչները.
 - ռադիոները, հեռուստացույցները.
 - կինեմատոգրաֆիական եւ այլ պրոյեկտորները.
 - ձայներիզների կամ սկավառակների վրա ձայնագրությունները (լեզվի դասընթացներ, ռադիոհաղորդումներ, բարեմաղթանքներ, երաժշտություն եւ ժամանց).
 - լուսարկված եւ երեւակված ժապավենները.
 - ֆիլմերի սլայդները.
 - տեսաերիզները:
- գ) Սպորտային պարագաներ, ինչպիսիք են՝
- սպորտային հագուստը.
 - գնդակները.
 - ռակետները եւ ցանցերը.
 - սեղանի խաղերը.
 - սպորտային սարքավորումները.
 - մարմնամարզական սարքավորումները:
- դ) Նախասիրություններին առնչվող նյութեր, ինչպիսիք են՝

- փակ տարածքի համար նախատեսված խաղերը.
 - երաժշտական գործիքները.
 - սիրողական բեմարվեստի համար նախատեսված նյութերը.
 - նկարչության, քանդակագործության, փայտագործության եւ մետաղագործության, գորգագործության եւ այլնի համար նախատեսված նյութերը:
- ե) Կրոնական գործունեության համար նախատեսված սարքավորումները:
- զ) Բարեկեցությունն ապահովող նյութերի մասերն ու լրացուցիչ պարագաները:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ III

Կրթական, գիտական կամ մշակութային գործունեության համար ներմուծված ցանկացած այլ ապրանք

Նկարագրական ցանկ

Ապրանքներ, ինչպիսիք են՝

1. զգեստները եւ բեմական պարագաները, որոնք հետ վերադարձվելու պայմանով անվճար ուղարկվում են թատերական խմբերին կամ թատրոններին.
2. երաժշտական պարտիտուրաները, որոնք հետ վերադարձվելու պայմանով անվճար ուղարկվում են երաժշտական թատրոններին կամ նվագախմբերին:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ.6

ՀԱՎԵԼՎԱԾ ՃԱՆԱԿԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԵՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Սահմանումներ

Հոդված 1

Սույն Հավելվածի նպատակներով՝

ա) «ճանապարհորդ» եզրույթը նշանակում է՝

անձ, որը զբոսաշրջության, սպորտի, բիզնեսի, մասնագիտական հանդիպումների, առողջական, ուսումնական եւ այլ նպատակներով մուտք է գործում Պայմանավորվող կողմի տարածք, որտեղ ինքը սովորաբար չի բնակվում.

բ) «անձնական իրեր» եզրույթը նշանակում է՝

բոլոր նոր կամ օգտագործված իրերը, որոնք ողջամտորեն կարող են պահանջվել ուղեւորության ընթացքում ճանապարհորդի անձնական օգտագործման համար՝ հաշվի առնելով ուղեւորության բոլոր հանգամանքները, սակայն բացառելով առեւտրային նպատակների համար ներմուծված ապրանքները: Անձնական իրերի նկարագրական ցանկը ներկայացված է սույն Հավելվածի I Ենթահավելվածում.

գ) «սպորտային նպատակների համար ներմուծված ապրանքներ» եզրույթը նշանակում է՝

սպորտի համար անհրաժեշտ պարագաներ եւ ժամանակավոր ներմուծման տարածքում ճանապարհորդների կողմից սպորտային մրցումների կամ ցուցադրությունների համար կամ մարզումների համար օգտագործվող այլ իրեր: Այդ ապրանքների նկարագրական ցանկը ներկայացված է սույն Հավելվածի II Ենթահավելվածում:

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

Անձնական իրերը եւ սպորտային նպատակների համար ներմուծված ապրանքներն ստանում են ժամանակավոր ներմուծման թույլտվություն՝ սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն:

ԳԼՈՒԽ III

Այլ դրույթներ

Հոդված 3

Սույն Հավելվածով տրամադրվող հնարավորությունների կիրառման համար՝

- ա) ներմուծվող անձնական իրերը անձը պետք է կրի իր վրա կամ ուղեբեռում (որը կարող է ուղեկցվել կամ չուղեկցվել ճանապարհորդի կողմից)։
- բ) սպորտային նպատակների համար ներմուծված ապրանքների սեփականատերը պետք է լինի ժամանակավոր ներմուծման տարածքից դուրս հաստատված կամ ռեզիդենտ անձ, եւ դրանք պետք է ներմուծվեն ողջամիտ քանակությամբ՝ հաշվի առնելով դրանց նախատեսված օգտագործումը:

Հոդված 4

1. Անձնական իրերի ժամանակավոր ներմուծումը թույլատրվում է առանց մաքսային փաստաթղթի կամ երաշխիքի պահանջի: Այնուամենայնիվ, մաքսային փաստաթուղթ եւ երաշխիք կարող է պահանջվել այն իրերի դեպքում, որոնց առնչությամբ գործում են բարձր դրույքաչափի ներմուծման տուրքեր եւ հարկեր:
2. Հնարավորության դեպքում սպորտային նպատակների համար ներմուծված ապրանքների համար մաքսային փաստաթղթի եւ երաշխիքի փոխարեն կարող է ընդունվել ապրանքների գույքացուցակը՝ վերաարտահանման վերաբերյալ պարտավորագրի հետ:

Հոդված 5

1. Անձնական իրերն ամենաուշը պետք է վերաարտահանվեն, երբ դրանք ներմուծած անձը լքում է ժամանակավոր ներմուծման տարածքը:
2. Սպորտային նպատակների համար ներմուծված ապրանքների վերաարտահանման ժամկետը ժամանակավոր ներմուծման օրվանից հետո առնվազն տասներկու ամիս է:

Հոդված 6

Սույն Հավելվածի ենթահավելվածները կազմում են սույն Հավելվածի անբաժանելի մասը:

Հոդված 7

Ուժի մեջ մտնելուց հետո սույն Հավելվածը, սույն Կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն, դադարեցնում եւ փոխարինում է 1954 թվականի հունիսի 4-ին Նյու Յորքում կնքված՝ «Զբոսաշրջության բնագավառում մաքսային արտոնությունների մասին» կոնվենցիայի 2-րդ եւ 5-րդ հոդվածներն այն Պայմանավորվող կողմերի միջեւ հարաբերություններում, որոնք ընդունել են սույն Հավելվածը եւ հանդիսանում են այդ կոնվենցիայի Պայմանավորվող կողմեր:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ I

Անձնական իրեր

Նկարագրական ցանկ

1. Հագուստ:
2. Խնամքի պարագաներ:
3. Անձնական զարդեր:
4. Ֆոտոխցիկներ եւ կինոխցիկներ՝ ֆոտոժապավենի եւ լրացուցիչ պարագաների ողջամիտ քանակությամբ:
5. Սլայդների կամ ժապավենների դյուրակիր պրոյեկտորներ եւ դրանց լրացուցիչ պարագաներ՝ սլայդների կամ ժապավենների ողջամիտ քանակությամբ:
6. Տեսախցիկներ եւ դյուրակիր տեսաձայնագրիչներ՝ տեսաերիզների ողջամիտ քանակությամբ:
7. Դյուրակիր երաժշտական գործիքներ:
8. Դյուրակիր գրամոֆոններ՝ ձայնապնակներով:
9. Դյուրակիր ձայնագրիչներ եւ վերարտադրիչներ (այդ թվում՝ դիկտոֆոններ) երիզներով:
10. Դյուրակիր ռադիոընդունիչներ:
11. Դյուրակիր հեռուստացույցներ:
12. Դյուրակիր գրամեքենաներ:
13. Դյուրակիր հաշվիչներ:
14. Դյուրակիր անձնական համակարգիչներ:
15. Հեռադիտակներ:
16. Մանկասայլակներ:
17. Անվասայլակներ հաշմանդամների համար:
18. Սպորտային սարքավորումներ, ինչպիսիք են վրաններն ու այլ ճամբարային, ձկնորսական, ալպինիզմի, ջրասուզման սարքերը, զինամթերքով սպորտային զենքերը, առանց շարժիչի հեծանիվները, 5.5 մետրից պակաս երկարություն ունեցող կանոնները կամ բայդարկաները, դահուկները, թենիսի ռակետները, սերֆինգի տախտակները, վինդսերֆինգի տախտակները, դելտապլանները եւ սավառնակները, գոլֆի սարքավորումները:

19. Դիալիզի եւ նմանատիպ բժշկական դյուրակիր սարքավորումներ եւ դրանց հետ օգտագործման նպատակով ներմուծված մեկանգամյա օգտագործման պարագաներ:
20. Զուտ անձնական բնույթի այլ պարագաներ:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ II

Սպորտային նպատակների համար ներմուծված ապրանքներ

Նկարագրական ցանկ

- Ա. Թեթև ատլետիկայի պարագաներ, ինչպիսիք են՝
- արգելքները.
 - նիզակները, սկավառակները, ձողերը, գնդերը, մուրճերը:
- Բ. Գնդակով մարզաձեւերի պարագաներ, ինչպիսիք են՝
- ցանկացած տեսակի գնդակները.
 - ոակետները, թակիչները, մականները, փայտերը եւ նման այլ պարագաները.
 - ցանկացած տեսակի ցանցերը.
 - դարպասաձողերը:
- Գ. Ձմեռային սպորտի հարմարանքներ, ինչպիսիք են՝
- դահուկները եւ մականները.
 - չմուշկները.
 - բոբսլեյները.
 - քրլինգի հարմարանքները:
- Դ. Ցանկացած տեսակի մարզական հագուստ, կոշիկներ, ձեռնոցներ, - գլխարկներ եւ այլն:
- Ե. Ջրային սպորտի հարմարանքներ, ինչպիսիք են՝
- կանոնները եւ բայդարկաները.
 - առագաստանավակները եւ թիանավակները, առագաստները, թիակները եւ լայնաբերան թիերը.
 - սերֆինգի տախտակները եւ առագաստները:
- Զ. Շարժիչով փոխադրամիջոցներ եւ նավեր, ինչպիսիք են՝
- մեքենաները.
 - շարժիչով հեծանիվները.
 - մոտորանավակները:

Է. Տարբեր միջոցառումների համար հարմարանքներ, ինչպիսիք են՝

- սպորտային զենքերն ու զինամթերքը.
- առանց շարժիչի հեծանիվները.
- նետաձիգների նետերն ու աղեղները.
- սուսերամարտի հարմարանքները.
- մարմնամարզության հարմարանքները.
- կողմնացույցները.
- ըմբշամարտի գորգերը եւ տատամիները.
- ծանր ատլետիկայի հարմարանքները.
- ծիսավարման հարմարանքները, երկանիվ կառքերը.
- դելտապլանները, սավառնակները, վինդսերֆինգի տախտակները.
- ալպինիզմի հարմարանքները.
- միջոցառման երաժշտական ուղեկցման կասետները:

Ը. Օժանդակ սարքավորումներ, ինչպիսիք են՝

- չափող եւ միավորները ցուցադրող սարքերը.
- արյան եւ մեզի հետազոտման ապարատները:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ.7

ՀԱՎԵԼՎԱԾ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Սահմանումներ

Հոդված 1

Սույն Հավելվածի նպատակներով «զբոսաշրջության գովազդային նյութ» եզրույթը նշանակում է՝

Ապրանքներ, որոնք ներմուծվում են՝ խրախուսելու համար օտարերկրյա այլ պետություն հանրության այցը, մասնավորապես՝ այնտեղ կազմակերպվող մշակութային, կրոնական, զբոսաշրջային, սպորտային կամ մասնագիտական հանդիպումներին կամ ցուցադրություններին մասնակցելու նպատակով: Այդ նյութերի նկարագրական ցանկը ներկայացված է սույն Հավելվածի ենթահավելվածում:

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

Բացառությամբ սույն Հավելվածի 5-րդ հոդվածում նշված նյութերի, որոնց համար տրվում է անմիջապես ներմուծման թույլտվություն՝ առանց ներմուծման տուրքերի եւ հարկերի՝ զբոսաշրջության գովազդային նյութերը, սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն, ստանում են ժամանակավոր ներմուծման թույլտվություն:

ԳԼՈՒԽ III

Այլ դրույթներ

Հոդված 3

Սույն Հավելվածով տրամադրվող հնարավորությունների կիրառման համար զբոսաշրջության գովազդային նյութերի սեփականատերը պետք է լինի ժամանակավոր ներմուծման տարածքից դուրս հաստատված անձ, եւ նյութերը պետք է ներմուծվեն ողջամիտ քանակություններով՝ հաշվի առնելով դրանց նախատեսված օգտագործումը:

Հոդված 4

Զբոսաշրջության գովազդային նյութերի վերաարտահանման ժամկետը ժամանակավոր ներմուծման օրվանից հետո առնվազն տասներկու ամիս է:

Հոդված 5

Առանց ներմուծման տուրքեր եւ հարկեր վճարելու ուղղակի ներմուծում թույլատրվում է հետեւյալ գովազդային նյութերի համար՝

- ա) փաստաթղթեր (թղթապանակներ, գրքույկներ, գրքեր, ամսագրեր, ուղեցույցներ, շրջանակով կամ առանց շրջանակի պաստառներ, առանց շրջանակի լուսանկարներ եւ խոշորացված լուսանկարներ, պատկերազարդ կամ ոչ պատկերազարդ քարտեզներ, պատուհանի տպագիր թափանցիկ պաստառներ)՝ անվճար տարածման համար նախատեսված՝ պայմանով, որ այդ փաստաթղթերը չպարունակեն 25 տոկոսից ավելի մասնավոր առետրային գովազդ եւ ակնհայտորեն նախատեսված լինեն ընդհանուր գովազդային նպատակների համար.
- բ) պաշտոնական զբոսաշրջային գործակալությունների կողմից հրապարակված կամ հովանավորվող՝ օտարերկրյա հյուրանոցների ցանկեր ու տարեգրքեր եւ արտերկրում գործող տրանսպորտային ծառայությունների ժամանակացույցեր, եթե այդ փաստաթղթերը նախատեսված են անվճար տարածման համար եւ չեն պարունակում 25 տոկոսից ավելի մասնավոր առետրային գովազդ.
- գ) ազգային պաշտոնական զբոսաշրջային գործակալությունների կողմից նշանակված հավատարմագրված ներկայացուցիչներին կամ թղթակիցներին ուղարկվող տեխնիկական նյութեր, որոնք նախատեսված չեն տարածման համար, օրինակ՝ տարեգրքեր, հեռախոսային տեղեկատուներ, հյուրանոցների ցանկեր, տոնավաճառների կատալոգներ, ձեռարվեստի էժան նմուշներ, թանգարանների, համալսարանների, սպա-առողջարանների եւ նմանատիպ հաստատությունների վերաբերյալ փաստաթղթեր:

Հոդված 6

Սույն Հավելվածի ենթահավելվածը կազմում է սույն Հավելվածի անբաժանելի մասը:

Հոդված 7

Ուժի մեջ մտնելուց հետո սույն Հավելվածը, սույն Կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն, դադարեցնում եւ փոխարինում է 1954 թվականի հունիսի 4-ին Նյու Յորքում կնքված՝ «Զբոսաշրջության բնագավառում մաքսային արտոնությունների մասին» կոնվենցիային կից Լրացուցիչ արձանագրությունը, որը վերաբերում է զբոսաշրջության գովազդային փաստաթղթերի եւ նյութերի ներմուծմանը, այն Պայմանավորվող կողմերի միջեւ հարաբերություններում, որոնք ընդունել են սույն Հավելվածը եւ հանդիսանում են այդ Արձանագրության Պայմանավորվող կողմ:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ

Զբոսաշրջության գովազդային նյութեր

Նկարագրական ցանկ

1. Ազգային պաշտոնական զբոսաշրջային գործակալությունների կողմից նշանակված հավատարմագրված ներկայացուցիչների կամ թղթակիցների գրասենյակներում կամ ժամանակավոր ներմուծման տարածքի մաքսային մարմինների կողմից հաստատված վայրերում ցուցադրության համար նախատեսված նյութեր՝ պատկերներ եւ նկարներ, շրջանակով լուսանկարներ եւ խոշորացված լուսանկարներ, արվեստի գրքեր, կտավներ, փորագրություններ կամ լիտոգրաֆներ, քանդակներ ու գորելեններ եւ արվեստի նմանատիպ այլ գործեր:
2. Ցուցադրական նյութեր (ցուցափեղկեր, ստենդներ եւ նմանատիպ առարկաներ)՝ ներառյալ այդ ցուցադրության համար անհրաժեշտ էլեկտրական եւ մեխանիկական սարքավորումները:
3. Վավերագրական ֆիլմեր, ձայնագրություններ, ժապավենային եւ այլ ձայնագրություններ՝ նախատեսված անվճար ներկայացումների նպատակով օգտագործման համար՝ բացառությամբ այն ձայնագրությունների, որոնք դառնում են առետրային գովազդի առարկա եւ ընդհանուր վաճառքի են դրված ժամանակավոր ներմուծման տարածքում:
4. Դրոշների ողջամիտ քանակություն:
5. Եռաչափ պատկերներ, ծավալային մոդելներ, լապտերային սլայդներ, տպագրական կաղապարներ, լուսանկարչական նեգատիվներ:
6. Ազգային ձեռարվեստի իրերի, տարազների եւ ֆոլկլորի համանման առարկաների նմուշներ՝ ողջամիտ քանակությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱԲԵՌ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Սահմանումներ

Հոդված 1

Սույն Հավելվածի նպատակներով՝

- ա) «որպես սահմանային փոխադրաբեռ ներմուծված ապրանքներ» եզրույթը նշանակում է՝
- ապրանքներ, որոնք փոխադրվում են սահմանային գոտու բնակիչների կողմից իրենց մասնագիտական գործունեության իրականացման կամ առետրի նպատակով (բժիշկներ, արհեստավորներ եւ այլն)։
 - սահմանային գոտու բնակիչների անձնական կամ կենցաղային իրեր՝ ներմուծված նրանց կողմից՝ վերանորոգման, արտադրման կամ վերամշակման համար։
 - սարքավորումներ՝ նախատեսված ժամանակավոր ներմուծման տարածքի սահմանային գոտում գտնվող հողատարածքի վրա աշխատելու համար։
 - պաշտոնական մարմնի սեփականություն հանդիսացող սարքավորումներ՝ ներմուծված փրկարարական գործողությունների համար (հրդեհ, ջրհեղեղներ եւ այլն)։
- բ) «սահմանային գոտի» հասկացությունը նշանակում է՝
- հողային սահմանին հարակից մաքսային տարածքի գոտի, որի տարածությունը սահմանված է ազգային օրենսդրությամբ, եւ որի սահմանները ծառայում են սահմանային փոխադրումը այլ փոխադրումներից տարբերակելու համար։
- գ) «սահմանային գոտու բնակիչներ» եզրույթը նշանակում է՝
- սահմանային գոտում հաստատված կամ բնակվող անձինք։
- դ) «սահմանային փոխադրում» եզրույթը նշանակում է՝
- սահմանային գոտու բնակիչների կողմից երկու հարակից սահմանային գոտիների միջեւ իրականացվող ներմուծումներ։

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

Որպես սահմանային փոխադրաբեռ ներմուծված ապրանքներն ստանում են ժամանակավոր ներմուծման թույլտվություն՝ սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն:

ԳԼՈՒԽ III

Այլ դրույթներ

Հոդված 3

Սույն Հավելվածով տրամադրվող հնարավորությունների կիրառման համար՝

- ա) որպես սահմանային փոխադրաբեռ ներմուծված ապրանքները պետք է լինեն ժամանակավոր ներմուծման տարածքին հարակից սահմանային գոտու բնակչի սեփականություն.
- բ) հողատարածքի վրա աշխատելու համար նախատեսված սարքավորումները պետք է օգտագործվեն ժամանակավոր ներմուծման տարածքի սահմանային գոտուն հարակից սահմանային գոտու բնակիչների կողմից, որոնք աշխատում են այդ տարածքի սահմանային գոտում գտնվող հողատարածքի վրա: Այս սարքավորումները պետք է օգտագործվեն գյուղատնտեսական կամ անտառային աշխատանքների համար, ինչպիսիք են փայտանյութի բեռնաթափումը կամ փոխադրումը, կամ՝ ձկնաբուծության նպատակով.
- գ) վերանորոգման, արտադրման կամ վերամշակման համար սահմանային փոխադրումները պետք է կրեն բացառապես ոչ առևտրային բնույթ:

Հոդված 4

1. Որպես սահմանային փոխադրաբեռ ներմուծված ապրանքների ժամանակավոր ներմուծումը թույլատրվում է առանց մաքսային փաստաթղթի կամ երաշխիքի պահանջի:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է որպես սահմանային փոխադրաբեռ ներմուծված ապրանքների ժամանակավոր ներմուծման թույլտվություն շնորհելու համար պահանջել ապրանքների գույքացուցակ՝ վերաարտահանման պարտավորագրի հետ:
3. Ժամանակավոր ներմուծում կարող է նաեւ տրամադրվել մաքսակետի կողմից վարվող գրանցամատյանում սովորական մուտքի նշումի հիման վրա:

Հոդված 5

1. Որպես սահմանային փոխադրաբեռ ներմուծված ապրանքների վերաարտահանման համար տրամադրվող ժամկետն առնվազն տասներկու ամիս է, որը հաշվարկվում է ժամանակավոր ներմուծման օրվանից:
2. Այնուամենայնիվ, հողատարածքի վրա աշխատելու համար նախատեսված սարքավորումները պետք է վերաարտահանվեն աշխատանքների ավարտից հետո:

ՀԱՎԵԼՎԱԾ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Սահմանումներ

Հոդված 1

Սույն Հավելվածի նպատակներով՝

- ա) «մարդասիրական օգնության նպատակով ներմուծված ապրանքներ» եզրույթը նշանակում է՝

բժշկական, վիրաբուժական ու լաբորատոր սարքավորումներ եւ հումանիտար օգնության խմբաքանակներ:

- բ) «հումանիտար օգնության խմբաքանակներ» եզրույթը նշանակում է՝

այն բոլոր ապրանքները, ինչպիսիք են ավտոմեքենաները եւ տրանսպորտային այլ միջոցները, վերմակները, վրանները, հավաքովի տները կամ առաջին անհրաժեշտության այլ ապրանքները, որոնք որպես օգնություն ուղարկվում են բնական աղետից եւ նման արհավիրքներից տուժածներին:

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

Մարդասիրական օգնության նպատակով ներմուծված ապրանքներն ստանում են ժամանակավոր ներմուծման թույլտվություն՝ սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն:

ԳԼՈՒԽ III

Այլ դրույթներ

Հոդված 3

Սույն Հավելվածով տրամադրվող հնարավորությունների կիրառման համար՝

- ա) մարդասիրական օգնության նպատակով ներմուծված ապրանքների սեփականատերը պետք է լինի ժամանակավոր ներմուծման տարածքից դուրս հաստատված անձ, եւ դրանք պետք է փոխ տրվեն անվճար.
- բ) բժշկական, վիրաբուժական եւ լաբորատոր սարքավորումները պետք է նախատեսված լինեն այն հիվանդանոցների եւ բժշկական այլ հաստատությունների կողմից օգտագործման համար, որոնք հայտնվել են բացառիկ հանգամանքներում, ունեն դրանց հրատապ կարիքը՝ պայմանով, որ այդ սարքավորումները ողջամիտ քանակությամբ հասանելի չեն ժամանակավոր ներմուծման տարածքում.
- գ) հումանիտար օգնության խմբաքանակները պետք է ուղարկվեն ժամանակավոր ներմուծման տարածքում իրավասու մարմինների կողմից հաստատված անձանց:

Հոդված 4

1. Հնարավորության դեպքում, մաքսային փաստաթղթի եւ երաշխիքի փոխարեն, բժշկական, վիրաբուժական եւ լաբորատոր սարքավորումների համար կարող է ընդունվել ապրանքների գույքացուցակը՝ վերաարտահանման պարտավորագրի հետ:
2. Հումանիտար օգնության խմբաքանակների ժամանակավոր ներմուծումը թույլատրվում է՝ առանց մաքսային փաստաթղթի կամ երաշխիքի: Այնուամենայնիվ, մաքսային մարմինները կարող են պահանջել ապրանքների գույքացուցակ՝ վերաարտահանման պարտավորագրի հետ:

Հոդված 5

1. Բժշկական, վիրաբուժական եւ լաբորատոր սարքավորումների վերաարտահանման համար տրամադրվող ժամկետը որոշվում է կարիքներին համապատասխան:
2. Հումանիտար օգնության խմբաքանակների վերաարտահանման համար տրամադրվող ժամկետն առնվազն տասներկու ամիս է, որը հաշվարկվում է ժամանակավոր ներմուծման օրվանից:

ՀԱՎԵԼՎԱԾ Գ

ՀԱՎԵԼՎԱԾ ՏՐԱՆՍԿՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Սահմանումներ

Հոդված 1

Սույն հավելվածի նպատակներով՝

ա) «տրանսպորտային միջոցներ» եզրույթը նշանակում է՝

նավ (ներառյալ նավի վրայի կամ առանձին բեռնանավերը եւ բարժաները եւ ստորջրյա թեւերի վրա նավերը), օդասահ (օդային բարձով) նավ, ինքնաթիռ, շարժիչով ճանապարհային փոխադրամիջոցներ (ներառյալ շարժիչներով հեծանիվները, կցասայլերը, կիսակցասայլերը եւ փոխադրամիջոցների համակցությունները) եւ երկաթուղային շարժակազմ՝ իրենց սովորական պահեստամասերով, լրացուցիչ հարմարանքներով եւ տրանսպորտային միջոցների վրայի սարքավորումներով (ներառյալ բեռների բեռնման, բեռնաթափման, տեղափոխման եւ պաշտպանության հատուկ սարքավորումները):

բ) «առեւտրային նպատակով օգտագործում» եզրույթը նշանակում է՝

անձանց տեղափոխում՝ վճարի դիմաց, կամ ապրանքների արդյունաբերական կամ առեւտրային փոխադրում՝ վճարի դիմաց կամ առանց վճարի:

գ) «անձնական օգտագործում» եզրույթը նշանակում է՝

տվյալ անձի կողմից տեղափոխման իրականացում՝ բացառապես անձնական օգտագործման նպատակով՝ բացառելով առեւտրային նպատակով օգտագործումը:

դ) «ներքին փոխադրում» եզրույթը նշանակում է՝

ժամանակավոր ներմուծման տարածքում վերցված անձանց կամ բեռնված ապրանքների փոխադրում՝ նույն տարածքի որեւէ վայրում իջեցնելու կամ բեռնաթափելու նպատակով:

ե) «սովորական բաքեր» եզրույթը նշանակում է՝

բաքեր՝ արտադրողի կողմից նախատեսված բոլոր այն տրանսպորտային միջոցների համար, որոնք նույն տեսակի են, ինչ խնդրո առարկա փոխադրամիջոցները, եւ որոնց մշտական կառուցվածքը թույլ է տալիս վառելանյութի ուղղակի օգտագործումը, ինչպես

առաջ մղման, այնպես էլ համապատասխան դեպքերում փոխադրման ընթացքում սառեցման համակարգերի եւ այլ համակարգերի աշխատանքի համար: Վառելանյութի այլ տեսակների ուղղակի օգտագործման համար նախատեսված տրանսպորտային միջոցներին հարմարեցված բաքերը եւ այլ համակարգերով սարքավորված տրանսպորտային միջոցների համակարգերին հարմարեցված բաքերը նույնպես համարվում են սովորական բաքեր:

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

Սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակավոր ներմուծումը թույլատրվում է հետեւյալի համար.

- ա) տրանսպորտային միջոցներ՝ առետրային կամ անձնական օգտագործման համար.
- բ) պահեստամասեր եւ սարքավորումներ՝ ներմուծված արդեն իսկ ժամանակավորապես ներմուծված տրանսպորտային միջոցների վերանորոգման համար: Փոխարինված մասերն ու սարքավորումները, որոնք չեն վերաարտահանվում, ենթակա են ներմուծման տուրքերի եւ հարկերի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ոչնչացվում են սույն Կոնվենցիայի 14-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 3

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման սովորական գործողությունները եւ վերանորոգումը, որոնք անհրաժեշտ են դարձել դեպի ժամանակավոր ներմուծման տարածք կամ այդ տարածքում կատարվող ուղեւորության ընթացքում, եւ որոնք իրականացվում են ժամանակավոր ներմուծման ժամանակահատվածում, չպետք է փոփոխություն առաջացնեն սույն Կոնվենցիայի 1-ին հոդվածի «ա» ենթակետի իմաստով:

Հոդված 4

1. Ժամանակավորապես ներմուծված տրանսպորտային միջոցների սովորական բաքերում պարունակվող վառելանյութը, ինչպես նաեւ այդ տրանսպորտային միջոցների սովորական օգտագործման համար նախատեսված քայուղերն ներմուծվում են առանց ներմուծման տուրքեր ու հարկեր վճարելու եւ առանց ներմուծման արգելքների կամ սահմանափակումների:

2. Առեւտրային նպատակով օգտագործման համար նախատեսված՝ շարժիչով ճանապարհային փոխադրամիջոցների դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, այնուամենայնիվ, իրավունք ունի սահմանելու վառելիքի այն առավելագույն քանակությունը, որը ժամանակավորապես ներմուծված շարժիչով ճանապարհային փոխադրամիջոցների սովորական բաքերում կարող է ներմուծվել իր տարածք՝ առանց ներմուծման տուրքերի ու հարկերի եւ առանց ներմուծման արգելքներ կամ սահմանափակումներ կիրառելու:

ԳԼՈՒԽ III

Այլ դրույթներ

Հոդված 5

Սույն Հավելվածով տրամադրվող հնարավորությունների կիրառման համար՝

- ա) առեւտրային նպատակով օգտագործման համար նախատեսված տրանսպորտային միջոցները պետք է գրանցվեն ժամանակավոր ներմուծման տարածքից տարբեր այլ տարածքում, ժամանակավոր ներմուծման տարածքից տարբեր այլ տարածքում հաստատված կամ բնակվող անձի անունով եւ ներմուծվեն ու օգտագործվեն այդ տարածքից գործող անձանց կողմից.
- բ) անձնական օգտագործման համար նախատեսված տրանսպորտային միջոցները պետք է գրանցվեն ժամանակավոր ներմուծման տարածքից տարբեր այլ տարածքում, ժամանակավոր ներմուծման տարածքից տարբեր այլ տարածքում հաստատված կամ բնակվող անձի անունով եւ ներմուծվեն ու օգտագործվեն այդ տարածքից գործող անձանց կողմից:

Հոդված 6

Տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը թույլատրվում է առանց մաքսային փաստաթղթի կամ երաշխիքի:

Հոդված 7

Չնայած սույն Հավելվածի 5-րդ հոդվածի դրույթներին՝

- ա) առեւտրային նպատակով օգտագործման համար նախատեսված տրանսպորտային միջոցները կարող են օգտագործվել երրորդ անձանց կողմից՝ նույնիսկ այն դեպքում, երբ նրանք հաստատված են կամ բնակվում են ժամանակավոր ներմուծման տարածքում եւ պատշաճ կերպով լիազորված են ժամանակավոր ներմուծման թույլտվություն ստացած անձանց կողմից եւ գործում են նրանց անունից,
- բ) անձնական նպատակով օգտագործման համար նախատեսված տրանսպորտային միջոցները կարող են օգտագործվել երրորդ անձանց կողմից, որոնք պատշաճ կերպով լիազորված են ժամանակավոր ներմուծման թույլտվություն ստացած անձանց կողմից: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է թույլատրել իր տարածքում բնակվող անձի կողմից օգտագործումը, մասնավորապես, եթե տրանսպորտային միջոցն օգտագործվում է ժամանակավոր ներմուծման թույլտվություն ստացած անձի անունից եւ նրա ցուցումներով:

Հոդված 8

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի թույլ չտալ ժամանակավոր ներմուծումը կամ հետ վերցնել՝

- ա) առեւտրային նպատակով օգտագործման համար նախատեսված այն տրանսպորտային միջոցներից, որոնք օգտագործվում են ներքին փոխադրումների համար.
- բ) անձնական օգտագործման համար նախատեսված այն տրանսպորտային միջոցներից, որոնք ներքին փոխադրումներում կիրառվում են առեւտրային օգտագործման համար.
- գ) այն տրանսպորտային միջոցներից, որոնք վարձակալվել են ներմուծումից հետո կամ վարձակալության ընթացքում ներմուծման դեպքում՝ կրկին վարձակալվում են կամ տրվում են ենթավարձակալության՝ անմիջապես վերաարտահանումից տարբերվող այլ նպատակով:

Հոդված 9

1. Առեւտրային նպատակով օգտագործման համար նախատեսված տրանսպորտային միջոցները վերաարտահանվում են փոխադրման այն գործողությունների ավարտից հետո, որոնց համար դրանք ներմուծվել են:
2. Անձնական օգտագործման համար նախատեսված տրանսպորտային միջոցները յուրաքանչյուր տասներկուամսյա ժամանակահատվածի ընթացքում կարող են մնալ ժամանակավոր ներմուծման տարածքում՝ անընդմեջ կամ ընդհատվող վեց ամիս ժամկետով:

Հոդված 10

Համաձայն սույն Կոնվենցիայի 29-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի կատարելու վերապահում սույն Հավելվածի հետեւյալ հոդվածների առնչությամբ՝

- ա) 2-րդ հոդվածի «ա» ենթակետի վերաբերյալ, որքանով այն վերաբերում է շարժիչով ճանապարհային փոխադրամիջոցների եւ երկաթուղային շարժակազմի ժամանակավոր ներմուծմանը.
- բ) 6-րդ հոդվածի վերաբերյալ, որքանով այն վերաբերում է առետրային նպատակով օգտագործման համար նախատեսված՝ շարժիչով ճանապարհային փոխադրամիջոցներին եւ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներին.
- գ) 9-րդ հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ:

Հոդված 11

Սույն հավելվածն ուժի մեջ մտնելուց հետո, սույն Կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն, ուժը կորցրած է ճանաչվում եւ փոխարինվում է 1954 թ. հունիսի 4-ին Նյու Յորքում կնքված՝ Մասնավոր ճանապարհային փոխադրամիջոցների ժամանակավոր ներմուծման մասին մաքսային կոնվենցիային, 1956 թ. մայիսի 18-ին ժնեւում կնքված՝ Առետրային ճանապարհային փոխադրամիջոցների ժամանակավոր ներմուծման մասին կոնվենցիային եւ 1956 թ. մայիսի 18-ին ժնեւում կնքված՝ Անձնական օգտագործման նպատակով ինքնաթիռների եւ զբոսանավերի ժամանակավոր ներմուծման մասին կոնվենցիային՝ այն Պայմանավորվող կողմերի միջեւ, որոնք ընդունել են սույն Հավելվածը եւ այդ կոնվենցիաների Պայմանավորվող կողմ են:

ՀԱՎԵԼՎԱԾ Դ

ՀԱՎԵԼՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Սահմանումներ

Հոդված 1

Սույն Հավելվածի նպատակներով՝

ա) «Կենդանիներ» եզրույթը նշանակում է՝

ցանկացած տեսակի կենդանի:

բ) «սահմանային գոտի» եզրույթը նշանակում է՝

հողային սահմանին հարակից մաքսային տարածքի գոտի, որի տարածությունը սահմանված է ազգային օրենսդրությամբ, եւ որի սահմանները ծառայում են սահմանային փոխադրումը այլ փոխադրումներից տարբերակելու համար:

գ) «սահմանային գոտու բնակիչներ» եզրույթը նշանակում է՝

սահմանային գոտում հաստատված կամ բնակվող անձինք:

դ) «սահմանային փոխադրում» եզրույթը նշանակում է՝

սահմանային գոտու բնակիչների կողմից երկու հարակից սահմանային գոտիների միջեւ իրականացվող ներմուծումներ:

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

Սույն Հավելվածի ենթահավելվածում նշված նպատակներով ներմուծված կենդանիներն ստանում են ժամանակավոր ներմուծման թույլտվություն՝ սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն:

ԳԼՈՒԽ III

Այլ դրույթներ

Հոդված 3

Սույն Հավելվածով տրամադրվող հնարավորությունների կիրառման համար՝

- ա) կենդանիների սեփականատերը պետք է լինի ժամանակավոր ներմուծման տարածքից դուրս հաստատված կամ բնակվող անձ.
- բ) բեռնակիր կենդանիները, որոնք պետք է օգտագործվեն ժամանակավոր ներմուծման տարածքի սահմանային գոտում գտնվող հողատարածքի վրա աշխատելու համար, պետք է ներմուծվեն ժամանակավոր ներմուծման սահմանային գոտուն հարակից սահմանային գոտու բնակիչների կողմից:

Հոդված 4

- 1. Սույն Հավելվածի 3-րդ հոդվածի «բ» ենթակետում նշված բեռնակիր կենդանիների եւ ամառային արոտավայրեր քշելու կամ սահմանային գոտում գտնվող հողատարածքի վրա արածեցնելու նպատակով ներմուծված կենդանիների ժամանակավոր ներմուծումը թույլատրվում է առանց մաքսային փաստաթղթի կամ երաշխիքի պահանջի:
- 2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կենդանիների ժամանակավոր ներմուծման համար կարող է պահանջել գույքացուցակ՝ վերաարտահանման պարտավորագրի հետ:

Հոդված 5

- 1. Սույն Կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի կատարելու վերապահում սույն Հավելվածի 4-րդ հոդվածի 1-ին կետի առնչությամբ:

2. Սույն Կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նաեւ իրավունք ունի կատարելու վերապահում սույն Հավելվածի ենթահավելվածի 12-րդ եւ 13-րդ կետերի առնչությամբ:

Հոդված 6

Կենդանիների վերաարտահանման ժամկետը ժամանակավոր ներմուծման օրվանից հետո առնվազն տասներկու ամիս է:

Հոդված 7

Սույն Հավելվածի ենթահավելվածը կազմում է դրա անբաժանելի մասը:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ

Ցանկ՝ ըստ 2-րդ հոդվածի

1. Վարժեցում
2. Մարզում
3. Բուժում
4. Պայտում կամ կշռում
5. Անասնաբուժություն
6. Ստուգում (օրինակ՝ գնելու նպատակով)
7. Մասնակցություն շոուների, ցուցահանդեսների, մրցույթների, մրցումների կամ ցուցադրումների
8. Զվարճանք (կրկեսային կենդանիներ եւ այլն)
9. Ճանապարհորդություն (ներառյալ ճանապարհորդների ընտանի կենդանիները)
10. Գործառույթի կատարում (ոստիկանական շներ կամ ձիեր, որոնողական շներ, կույրերին ուղեկցող շներ եւ այլն)
11. Փրկարարական գործողություններ
12. Ամառային արոտավայրեր քշելը կամ արածեցնելը
13. Աշխատանքի կամ փոխադրման իրականացում
14. Բժշկական նպատակներ (օձի թույնի տրամադրում եւ այլն)

ՀԱՎԵԼՎԱԾ Ե

ՀԱՎԵԼՎԱԾ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՏՈՒՐՔԵՐԻՑ ՈՒ ՀԱՐԿԵՐԻՑ ՄԱՍՆԱԿԻ ԱԶԱՏՈՒՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Սահմանումներ

Հոդված 1

Սույն Հավելվածի նպատակներով՝

ա) «մասնակի ազատումով ներմուծված ապրանքներ» եզրույթը նշանակում է՝

ապրանքներ, որոնք նշված են սույն Կոնվենցիայի այլ հավելվածներում, սակայն չեն բավարարում դրանցում սահմանված այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են ժամանակավոր ներմուծում թույլատրելու համար՝ լրիվ ազատելով ներմուծման տուրքերից ու հարկերից, ինչպես նաև՝ ապրանքներ, որոնք նշված չեն նման այլ հավելվածներում եւ ներմուծվում են, օրինակ, արտադրման կամ աշխատանքային նախագծերում ժամանակավոր օգտագործման համար:

բ) «մասնակի ազատում» եզրույթը նշանակում է՝

ազատում ներմուծման տուրքերի եւ հարկերի ընդհանուր գումարի մի մասի վճարումից, որը այլ կերպ ենթակա կլիներ վճարման, եթե ապրանքները բաց թողնվեին ներքին օգտագործման համար՝ ժամանակավոր ներմուծման ընթացակարգով ձեւակերպվելու օրը:

ԳԼՈՒԽ II

Կիրառման ոլորտը

Հոդված 2

Սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ սույն Հավելվածի 1-ին հոդվածի «ա» ենթակետում նշված ապրանքներն ստանում են մասնակի ազատումով ժամանակավոր ներմուծման թույլտվություն:

ԳԼՈՒԽ III

Այլ դրույթներ

Հոդված 3

Սույն Հավելվածով տրամադրվող հնարավորությունների կիրառման համար մասնակի ազատումով ներմուծված ապրանքների սեփականատերը պետք է լինի ժամանակավոր ներմուծման տարածքից դուրս հաստատված կամ բնակվող անձ:

Հոդված 4

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է կազմել այն ապրանքների ցանկը, որոնք կարող են ստանալ մասնակի ազատումով ժամանակավոր ներմուծման արտոնություն կամ զրկված են դրանից: Սույն Կոնվենցիայի ավանդապահը պետք է տեղեկացվի այդ ցանկի բովանդակության մասին:

Հոդված 5

Սույն ընթացակարգով գանձման ենթակա ներմուծման տուրքերի ու հարկերի գումարը յուրաքանչյուր այն ամսվա կամ ամսվա հատվածի համար, որի ընթացքում ապրանքները ձեռակերպվել են ժամանակավոր ներմուծման ընթացակարգով, չի կարող գերազանցել 5%-ը:

Հոդված 6

Գանձման ենթակա ներմուծման տուրքերի ու հարկերի գումարը չի կարող գերազանցել այն գումարը, որը կգանձվեր, եթե տվյալ ապրանքները բաց թողնվեին ներքին սպառման համար՝ ժամանակավոր ներմուծման ընթացակարգով ձեռակերպման օրը:

Հոդված 7

1. Սույն Հավելվածին համապատասխան վճարման ենթակա ներմուծման տուրքերի եւ հարկերի գումարը գանձվում է իրավասու մարմինների կողմից, երբ ընթացակարգն եզրափակվում է:
2. Այն դեպքերում, երբ, սույն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն, ժամանակավոր ներմուծման ընթացակարգը դադարեցվում է բացթողում՝ ներքին սպառման համար ընթացակարգով, մասնակի ազատումով գանձված ներմուծման տուրքերի եւ հարկերի գումարը հանվում է ներմուծման այն տուրքերի եւ հարկերի գումարից, որոնք ենթակա են վճարման ներքին սպառման համար բաց թողնելու արդյունքում:

Հոդված 8

Մասնակի ազատումով ներմուծված ապրանքների վերաարտահանման ժամկետը սահմանվում է՝ հաշվի առնելով սույն Հավելվածի 5-րդ եւ 6-րդ հոդվածների դրույթները:

Հոդված 9

Սույն Կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իրավունք ունի վերապահում կատարելու սույն Հավելվածի 2-րդ հոդվածի առնչությամբ՝ որքանով այն վերաբերում է ներմուծման հարկերից մասնակի ազատմանը:

«Ժամանակավոր ներմուծման մասին» Կոնվենցիայի վերաբերյալ

Համաձայն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի Հայաստանի Հանրապետությունն ընդունում է Կոնվենցիայի հետևյալ հավելվածները.

Հավելված Ա

Հավելված Բ.1

Հավելված Բ.2

Հավելված Բ.3

Հավելված Բ.5